

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

**ՉԱՐԱԴԵՏ ՄԱՐԸ
ՅԱՓՇՏԱԿԵՑ
ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՍԻՐՏԸ**
ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Բազմատասնեակ տարիներու հարազատութեամբ, իրարու կապուած մտերիմ պաշտօնակիցներն են՝ Ընկ. Պէյո Սիմոնեանի (իմ քնորոշումով միշտ՝ Պէյո ջանի) մասին անակնկալօրէն ինծի փոխանցուած մահագոյժին՝ իմ քնորանացի ակամայ արձագանքս հանդիսացաւ, ներկայ մահախօսակցինս վերնագրի շարադրանքը. «Չարադէտ Մահը Յափշտակեց Բանաստեղծին Սիրտը»:

Ընդհանրապէս այդպէս կը պատահի երբ անակնկալօրէն ստացուած ծանր հարուած մը կը ստանաս: Այդ ծանր ցնցումի պատճառով ցաւի զգայնութիւնը աստիճանաբար ինքզինքդ կը մատնէ աւելի ուշ, յաջորդող ռոպէներուն, երբ, յարաբերաբար կը յստականայ իմացածիդ դառնադէտ նշմարտացիութիւնը, որուն պատճառով խոցը աստիճանաբար աւելի կը բորբոքի լաւ ու վատ յուշերու անդադրում հրմշտուիներուն ներքեւ:

Այդ հոգեվիճակն էր իմս առաջին րոպէին, երբ, իմացայ մտերիմիս դառնադէտ մահուան լուրը: Մեքենաբար անցայ համակարգիչիս առջեւ, «Արարատ» օրաթերթի կայքէջի վրայ իրազեկ դառնալու համար մանրամասնութիւններուն...:

Մահագոյններու ամբողջ շարք մը դրուած էր հոն: Հոն էր Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան մահագոյնը: Հոն էր Ս. Գ. Հ. Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ մարմնի մահագոյնը:

Հոն էին Աղասի Մասնամիւղի, Արարատ օրաթերթի խմբագրութեան ու Տնօրէնութեան, Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան, Նոր Սեբունջ Մշակութային Միութեան, Կամար Գրականութեան եւ Գեղարուեստի Պարբերաթերթի խմբագրութեան եւ Լիբանանահայ Գրողներու Համախմբումի մահագոյնները, որոնք առանձինն առանձին, հանգամանօրէն կը գուժէին իրենց երկար տարիներու կուսակցական ղեկավար կազմերու անդամին (Հնչակեան Կեդրոն, Վարիչ Մարմին), երբեմնի պարզ շարքային անդամին (Աղասի Մնջ), խմբագրական կազմերու հաւատարմ գործիչին, (Արարատ Օրաթերթ, Արարատ Գրական, Կամար Գրականութեան եւ Գեղարուեստի Պարբերաթերթ) նուիրեալ ուսուցիչ, դաստիարակ եւ Տնօրէնին (Ռուբինեան վարժարան եւ Սահակեան Լեւոն Մկրտիչեան Գոլէն) եւ իբրեւ ազգային մշակոյթի ան-

Շաբ.ք էջ 19

Ֆրանքոֆոնի Նախագահները Կոչ Կ'ընեն Թուրքիոյ՝ ճանչնալ Հայց Ցեղասպանութիւնը



Սերժ Սարգսեան կ'ընդունի Ֆրանքոֆոնի տարածաշրջանային ղեկավարները

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան Մարտի 31-ին ընդունած է ֆրանսախօս երկիրներու՝ Ֆրանքոֆոնի խորհրդարանական վեհաժողովի պատուիրակութիւնը: Պատուիրակութեան անդամները այցելած են Միջնուսկաբերդի Յուշհամալիր եւ ապա հանդէս եկած են յայտարարութեամբ՝

կոչ ընելով Թուրքիոյ դէմ-դիմաց զալու իր պատմութեան հետ եւ ճանչնալու հայոց Ցեղասպանութիւնը:

Եւրոպայի տարածաշրջանի Ֆրանքոֆոնի խորհրդարանական վեհաժողովի նախագահները դա-

Շաբ.ք էջ 5

Երտողան.
«Հայերու արտօնութիւնեան կարիք չունինք»

Թուրքիոյ նախագահ Ռէճեփ Թայյիպ Էրտողան ըսած է, որ հայերը դիտմամբ Ապրիլ 24-ը ընտրած են որպէս Ցեղասպանութեան յիշատակի օր՝ խոչընդոտելու համար Կալիփոլիի արշաւանքին նուիրուած հանդիսութիւնները:


Միւս կողմէ հաղորդուեցաւ, որ Աւստրալիոյ կառավարութիւնը որեւէ պատուիրակութիւն պիտի չառաքէ Հայաստան՝ Ապրիլ 24-ի հանդիսութիւններուն մասնակցելու նպատակով, իսկ երկրի արչապետը պիտի մասնացի Կալիփոլիի հանդիսութիւններուն: Այս մասին յայտարարած է արտաքին գործոց նախարարութիւնը, առանց բացայայտելու պատճառները:

France 24 հեռատեսիլի կայանին տրուած զրոյցի մը մէջ Էրտողան յայտնած է, որ Կալիփոլիի հանդիսութիւնները կազմակերպելու համար իրենք հայերու արտօնութիւնը չեն պահանջեր: Ան պնդեց, որ հայ-թրքական

յարաբերութիւններուն մէջ Անգարա առած է բոլոր դրական քայլերը եւ խաղաղութեան ձեռք երկարած:

ՈՉ ԵՒՍ Է ԸՆԿ. ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ ԳՈՅԺ

Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը խոր ցաւով կը գուժէ իր հաւատարմ ընկերներէն, երկար տարիներ Կեդրոնական Վարչութեան անդամակցած եւ ազգային կուսակցական բազմաթիւ պարտականութիւններ ստանձնած, գրող, մշակութային գործիչ, կրթական մշակ՝



Ընկ. ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ-ի մահը, որ պատահեցաւ Ուրբաթ 27 Մարտ 2015-ին, յետ երկարատեւ հիւանդութեան: **Ս.Գ.Հ.Կ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Քալենք Հայոց Ցեղասպանութեան Արդարութեան Համար

Ապրիլ 24ին, մեր քայլերուն միացնելով պահանջատիրութեան ոգին, պիտի քալենք անվարան, վճռական, հաստատ եւ միասնական: Պիտի քալենք ոգեկոչելով եւ յարգելով մեր մէկուկէս միլիոն անմեղ նահատակներու յիշատակը: Տարբեր ընտանիքներէ, տարբեր վարժարաններէ եւ տարբեր շրջաններէ եկած սակայն միահամուռ, պիտի քալենք, անցնելով Լուս Անճելըսի զանազան փողոցներէն, յիշեցնելու համար աշխարհին որ մենք կը հաւատանք արդարութեան եւ ճշմարտութեան: Մեր սերունդին պարտականութիւնն է գալիք սերունդներուն մէջ վառ պահել ցեղասպանութեան յիշատակը եւ պահանջատիրութեան ոգին:

Անցնող ամիսներուն, Հայոց Ցեղասպանութեան Արեւմտեան Ամերիկայի 100 ամեակի շնորհիւ խումբերը, դառնալով մէկ վճռական ուժ, կազմակերպչական աշխատանք կը տանին, հնարաւորինս դիւրացնելու համար Արդարութեան Քայլարշակի մասնակցողներու երթեւեկութիւնը եւ ապահովելու համար անձնական ինքնաշարժներու կանգառները:

Ստորեւ ձեզի կը ներկայացնենք արդարութեան քայլարշակին միանալու համար տեղադրուած փոխադրամիջոցներու կեդրոններու անունները, անձնական ինքնաշարժներու կարգառներու եւ փոխադրամիջոցներու ցանկն ու հասցէները.

- Փոխադրամիջոցներ
- ԿԼԵՆՏԻՅԼ
- *Ս. Աստուածածին Եկեղեցի - 500 S. Central Ave.
- *Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Կաթողիկէ Եկեղեցի - 1510 E. Mountain Ave.
- ԹԱՀԱՆԿԱ
- *The Great Caesar Banquet Սրահ - 6723 Foothill Blvd.
- ՊԸՐՊԵՆՔ
- *Սբ. Ղեւոնդեանց Եկեղեցի -

Շաբ.ք էջ 5

ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Նոր իրավիճակ յառաջիկայ ցնցումների նախօրէին

ՀԱՅԿԱԶ ՂԱՀՐԻԵԱՆ

Գիւմրիում Մարտի 28-ին Հիմնադիր խորհրդարանի հանրահաւատքին տեղի ունեցած արիւնքի միջադէպ՝ դանակահարուէց Հիմնադմաներից մէկը: Ընդհանուր առմամբ, հանրահաւաքն ուղեկցուէց սաղրանքներով, ոստիկանութեան անտարբերութեան պայմաններում:

Հիմնադիր խորհրդարանի վերջին մի քանի ամիսների ակցիաները նշանաւորուել են բռնութիւններով: Անցեալ տարեվերջին հրդեհուծէին Հիմնադմաների մեքենաները, այս տարի դէպի Արցախ ատոերթը կանգնեցուց Բերտորում, իսկ մասնակիցները ենթարկուցին դատանի Եսէի: Եւ ահա, Գիւմրիի դանակահարութիւնը:

Ի՞նչ է կատարուում: Արդեօք իշխանութիւնը վախեցած է Հիմնադիր խորհրդարանի գործունէութիւնից: Միւս կողմից, շատերն են նշում, որ բռնութիւններ կիրառելով Հիմնադման, իշխանութիւնը փաստացի նպաստում է նրա վարկանիշի աճին: Ընդ որում, կիրառուում է բաւական անհամաչափ ուժ, որի կարիքը բացարձակապէս չկայ:

Հիմնադման 100-ամեակն առանց ռեփորմի շարժումը յայտարարել է, որ Ապրիլի 24-ին սկսելու է ռեփորմի հեռացման գործողութիւնը: Գիւմրիի համահաւաքի շարժման առաջնորդ՝ ժիրայր Սեֆիլեանը ներկայացրել է որոշ մանրամասներ. Ապրիլի 24-ի երեկոյեան սկսելու են ժողովրդի մոբիլիզացիան եւ հասնեն ռեփորմի հեռացմանը: Նա ստեղծ է, որ դա շատ կարճ է տեւելու, մի քանի օր, եւ մոբիլիզացիայի մասնակիցներին կոչ է արել իրենց հետ երեք օրուայ անուղ վերցնել: Նա աւելացրել է, որ Ապրիլի 24-ի միջոցառումների ժամանակ իրենք իրենց խօսքի թիւններ չեն անելու եւ թոյլ չեն տալու:

Ապրիլի 24-ին ռեփորմը հեռացնելու հանգամանքը դարձել է Հիմնադմանութեան հանդէպ քաղաքական շրջանակների վերաբերմունքի անկիւնաքարը: Քննադատելով Հիմնադմանութիւնը,

քաղաքական ուժերը պատճառ են բերում հենց այս հանգամանքը: Հետաքրքիր է, որ Ազգային ժողովի վերջին քառօրեայում՝ Հիմնադիրի հանրահաւաքի նախորդ օրը, աւանդական ճեպազրոյցները քաղաքական ուժերը նուիրեցին հենց այս թեմային: Սակայն, տպաւորութիւնն այն է, որ ինքիրն ամենեւին էլ Ապրիլի 24-ը չէ, այլ աւելի խորքային երեւոյթներ:

ԲՀԿ-ին ու նրա առաջնորդին դաշտից հեռացնելով, Սերժ Սարգսեանը յայտարարեց սահմանադրութեան փոփոխութեան գործընթացի երկրորդ փուլը եւ սկսեց հանդիպումներ ունենալ խորհրդարանական կուսակցութիւնների հետ: Նա յայտարարեց, որ բարենպաստ պայմաններ են առաջացել այդ գործընթացը «լայն կոնսուլիացիայի» միջոցով առաջ տանելու համար: «Լայն կոնսուլիացիան», այսինքն գործընթացի լեզու-տիմութիւնը պէտք է պահպանուէր հենց քաղաքական ուժերի միջոցով, որոնք իրենց հերթին ԲՀԿ-ի վերացումից յետոյ հնարաւորութիւն ստացան մասնակցել սահմանադրութեան փոփոխութեան, այսինքն նոր իշխանութեան բաժանման գործընթացին:

Արդեօք Հիմնադիր խորհրդարանի գործունէութիւնը կասկածի տակ է դնում «լայն կոնսուլիացիան», կամ խանգարում կուսակցութիւններին՝ դժուար է ասել: Միւս կողմից, իրականութիւնն այն է, որ քաղաքական դաշտ կոչուածն իսկապէս «կոնսուլիացուում» է Սերժ Սարգսեանի ծրագրերի շուրջ, ինչի ֆոնին էլ Հիմնադիր խորհրդարանը դառնում է «միակ ընդդիմութիւնը»:

Այսպիսով, «ռեփորմի հեռացնելու» մէկ ամիս առաջ ստեղծուել է ուշագրաւ իրավիճակ՝ «բոլորը Հիմնադիր խորհրդարանի դէմ», եւ արդէն ուրուագծուում է «կարմիր գիծը», որի մի կողմում յտակեցուել է ռեփորմը, միւս կողմում՝ նրան հեռացնողները:

Ո՞վ առաջինը կ'անցնի կարմիր գիծը...

«ԼՐԱԳԻՐ»

Նոր իրավիճակ ընդդիմադիր դաշտում

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Հիմնադիր խորհրդարանի Գիւմրիի հանրահաւաքում տեղի ունեցած արմկոտ միջադէպն ու դանակահարութիւնը ըստ էութեան դարձան Հայաստանում ստեղծուած նոր քաղաքական իրավիճակի առանցքային դրսեւորումներից մէկը:

Սա, իհարկէ, մի կողմից, քանի որ ընդհանուր առմամբ Գիւմրիում տեղի ունեցածը Հայաստանեան հին «աւանդուած» է, երբ իշխանութիւնները որեւէ ընդդիմադիր գործունէութիւն կամ գործողութիւն փորձում են կանխել կամ ձախողել քրէական տարբերի եւ խաժամուժի գործադրմամբ, ինչն էլ տեղի ունեցաւ Գիւմրիում Հիմնադիր խորհրդարանի դէմ:

Եւ այս տեսանկիւնից, իհարկէ, մենք պէտք է ինքիրը դիտարկենք երկու ասպեկտով: Մի պարագայում սրանք «աւանդական» բունարարներ են, որոնք արդէն երկու տասնամեակ իշխանութիւնների հիմնական զէնքերից

մէկն են ընդդիմադիր ցանկացած գործողութեան հանդէպ: Եւ այս առումով երեւի թէ զնահատակաների հարցում երկու կարծիք լինել չի կարող՝ սա միանշանակ դատապարտել է, եւ իշխանութիւնները միայն մի անելիք ունեն այս հարցում սեփական ուղղակի կամ անուղղակի պատասխանատուութիւնը հերքելու առումով՝ բացայայտել ամէն ինչ եւ պատժել մեղաւորներին: Եթէ այս ամէնը տեղի չունենայ, ապա թիւ մէկ պատասխանատունն եւ կազմակերպիչը ինքնաբերաբար դառնում են իշխանութիւնները: Եւ դժբախտաբար, այս տեսանկիւնից Հայաստանում բացայայտում տեղի չի ունենում:

Սրանից գատ՝ կայ երկրորդ, արդէն քաղաքական կամ ներքաղաքական ասպեկտը: Այս տեսանկիւնից Հիմնադիր խորհրդարանի գործունէութիւնն արդէն տեսական ժամանակ է, ինչ դարձել է տարբեր բունարարներ թիրախ: Իսկ

Շաբ.ը էջ 18

Սերժ Սարգսեանի տազնապարհ

ԷՄՄԱ ԳԱՐԻԷԼԵԱՆ

Մի քանի օր առաջ Սերժ Սարգսեանը FRANCE 24 հեռուստաընկերութեանը տուած հարցազրոյցում, խօսելով Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան մասին, չի բացառել ռազմական գործողութիւնների վերսկսումը. «Սա այն վիճակն է, երբ լայնամասշտաբ ռազմական գործողութիւնները կարող են սկսուել ոչ պլանաւորուած: Ցանկացած միջադէպ կարող է վերածուել աւելի մեծի, իսկ աւելի մեծը ռազմական գործողութիւնն է»: Սերժ Սարգսեանի խօսքով՝ Հայաստանը պատրաստ է դիմակայել ցանկացած ագրեսիայի. «Մենք պատերազմից վախենում ենք: Ես անձամբ պատերազմից վախենում եմ, բայց մենք կուղեւորցնենք վախենում»:

Անդրադառնալով Ռուսաստան-Արեւմուտք լարուած յարաբերութիւններին՝ Սերժ Սարգսեանն ստեղծ է, որ Հայաստանի համար ամենամեծ սպառնալիքն է սաղր սատը պատերազմի վերսկսումն է, քանի որ Հայաստանը միշտ համադրել է Արեւմուտքի եւ Ռուսաստանի շահերը. «Մենք ցանկանում ենք լաւ յարաբերութիւններ ունենալ Արեւմուտքի հետ, Եւրոպայի հետ: Այսօր ունենք այդ լաւ յարաբերութիւնները: Ցանկանում ենք լաւ յարաբերութիւններ ունենալ ՆԱՏՕ-ի հետ, Միացեալ Նահանգների հետ: Մենք ունենք ռազմավարական դաշնակից Ռուսաստանը, որը Հայաստանին մեծ օժանդակութիւն է ցուցաբերում, եւ մեզ համար ամենամեծ սպառնալիքն այդ լարուածութեան աճն է»:

Լրագրողի հարցին, թէ վստահո՞ւմ է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին, Սերժ Սարգսեանը պատասխանել է. «Ես ինձ շատ կոմֆորտ եմ զգում նրա հետ յարաբերութիւններում»: Վերջին մի քանի ամիսներին պաշտօնական երեւանը ամենաբարձր՝ ՀՀ նախագահի, պաշտպանութեան նախարարի ու արտգործնախարարի մակարդակով բարձրաձայնեց Ատրպէյճանին Ռուսաստանի կողմից սպառնալիքներ վաճառելու անհանգստութեան մասին: Ռուսաստանի իշխանութիւններն առայժմ շարունակում են լուրսթիւն պահպանել եւ չեն արձագանքում Հայաստանի իշխանութիւնների բաւական յստակ մտահոգութիւններին: Եթէ համադրենք վերջին ամիսներին շփման զծում լարուածութեան անխաղաղ էությունը, Ատրպէյճանի իշխանութիւնների՝ օր օրի հնչող աւելի ցիւրիկ յայտարարութիւնները եւ առհասարակ՝ արդէն մի քանի տարի Ղարաբաղեան կարգաւորման գործընթացի փակուղային իրավիճակը, ապա Սերժ Սարգսեանի կողմից ռազմական գործողութիւնների վերսկսման հնարաւորութեան մասին յայտարարութիւնը, այսինքն՝ «ոչ պլանաւորած» պատերազմի բռնկման ահազանգը, իսկապէս, տազնապարհ է, եւ այն ուղղուած էր նախեստաջ Ռուսաստանին:

Տազնապարհ, թերեւս, առաւելապէս պայմանաւորուած է Ռուսաստանի «չէզոքութիւն» պահանջները հակուածութիւնը կանխազգալով, քան ատրպէյճանական բանակի «վաճառանքութեամբ», ինչի

մասին այդ երկրի իշխանութիւնները պարբերաբար ճառերով են հանդէս գալիս ու համապատասխան քարոզչութիւն իրականացնում բացառապէս ներքին լսարանի համար: Ռուսաստանի՝ լուրսթիւն պահպանելու պատճառները, հաւանաբար, ուսնները «արդարացուած» են համարում: Մոսկուան այսօր չի ցանկանայ բռնել որեւէ մէկի կողմը. մէկի հետ «ռազմական բիզնեսն» է արդէն ռազմավարական բնոյթի հասել, միւսը Ռուսաստանի դաշնակից երկիր է համարուում, իսկ ընտրութիւնը որեւէ մէկի օգտին, թերեւս, ուսններին ձեռնտու է:

Այս ամէնը «հաշուել» է նաեւ Ալիեւը, որն էլ իրեն աւելի «ազատ» է զգում եւ սահմաններում լարուածութեամբ, դիւերսիաներով ու սաղրանքներով, իր հերթին, փորձում է ապացուցել, որ դուրս է եկել դարաբաղեան խաղաղ բանակցային գործընթացից, աւելին՝ արդէն «միջազգային պայմանագրերը» անտեսելու համար «հիմնաւորումներ» է առաջ քաշում:

Ի՞նչ է մնում անել Ռուսաստանին: Սպասել Լեռնային Ղարաբաղում ուղեւորական ներկայութիւնը «օրինականացնելու» յարմար առիթի: Այս հեռանկարի մասին արդէն իսկ յստակ ու անկաշկանդ խօսել է «հայ ազգի հաւատարիմ ընկեր» ժիրինովսկին: Իսկ աւելի վաղ Պուտինին Զօրի Բայալեանն էր ծաւալուն նամակ գրել: Այնպէս որ՝ մնում է Լեռնային Ղարաբաղում ուղեւորական հնարաւոր ներկայութեան վերաբերեալ պարզել ատրպէյճանական իշխող վերնախաւի տրամադրութիւնները:

«ԱՌԱՒՕՏ»



ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻ ՏՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
 SOF8. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
 MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Հիմնադիր Խորհրդարանի» Ապրիլ 24-ի Բանրահալաքը Խանգարիչ չի Լինելու

«Հիմնադիր Խորհրդարանը» համաձայնել է Ապրիլի 24-ի հանրահալաքն անցկացնել քաղաքային իշխանությունների առաջարկած էրեբունի թանգարանի մոտ: «Ազատութեան» հետ զրոյցում ասաց «Հիմնադիր Խորհրդարանի» նախագահ Գարեգին Զուբասյանը:

Երեւանի քաղաքապետարանը հրաժարուել էր Ապրիլի 24-ին Կենտրոնի որեւէ հրապարակ տրամադրել ընդդիմադիր շարժմանը՝ վկայակոչելով չիշատակի միջոցառումները:

Զուբասյանը նշեց, որ Ապրիլի 24-ին իրենց ձեռնարկելիք քայլերը «որեւիցէ խժժութիւն, որեւիցէ խանգարիչ հանգամանք չեն ունենալու այդ օրուայ ընդհանուր միջոցառումներին», եւ որ իրենք հասկանում եւ կիսում են ժողովրդի այդ օրուայ մեծամասնութեան զգացումները:

«Այդ օրուայ խորհուրդը, բացի նրանից, որ մեր կորուստն էր եւ մեր ցաւի ոգէկոչումն է, ըստ մեզ, նաեւ պայքարի ոգէկոչումն է, դրա համար մենք այդ օրուայ մեր ոգէկոչումին այլ քարի ոգէկոչումն էլ ենք ակնթայցնում», - ասաց Զուբասյանը:

Նշենք՝ «Հիմնադիր Խորհրդարանը» պնդում է, որ մինչեւ Ապրիլի 24-ը ոչ մի դիմադրութիւն իրենց կողմից չի լինելու, հանրահալաքներն էլ լինելու են խաղաղ, իշխանափոխութեան հասնելու են հանրային ճնշման միջոցով:

«Հիմնադիր Խորհրդարանի» փոխնախագահ ժիրայր Սեֆրլեանն օրերս յայտարարեց, որ Ապրիլի 24-ին իրենց պլանով սկսելու են քաղաքացիական անհնազանդութեան քայլերը եւ եթէ այդ ժամանակ արդէն բռնութիւն գործադրուի ժողովրդի նկատմամբ, բնականաբար, «կը լինի պատասխան,



«Հիմնադիր Խորհրդարանի» անդամ Հրաչեայ Միրզոյեանի դաճակախարութիւնը

որովհետեւ դա բխում է ինքնապաշտպանութեան սրբազան իրաւունքից»:

«Հիմնադիր Խորհրդարանի» «100-ամեակն առանց ուժի մի» նախաձեռնութեան անդամների Գիւմրիում հրաւիրած հանրահալաքի մասնակիցները մէկը դանակահարուեց:

Մի խումբ երիտասարդներ անընդմէջ փորձում էին սուղոցներով խանգարել, պարբերաբար տեղաշարժում ու վէճի էին բռնում մասնակիցների հետ:

Տարածքում հսկողութիւն իրականացնող ոստիկանները, սակայն, որեւէ կերպ չէին արձագանգում: Միջամտեցին միայն այն ժամանակ, երբ այդ երիտասարդները սկսեցին ձուլել նետել հանրահալաքի մասնակիցների ուղղութեամբ:

Հանրահալաքի մասնակիցներից ոմանք փորձեցին հետապնդել ձուլել նետողներին, ու հենց այդ ժամանակ էլ «Հիմնադիր Խորհրդարանի» անդամների մէկը՝ Հրաչեայ Միրզոյեանը դանակահարուեց: Հրաչեայ Միրզոյեանին տեղափոխեցին Գյումրու բժշկական կենտրոն:

2014-ին Երեւանի Քաղաքապետ Տարօն Մարգարեանի Միլիոններն Աւելացել Են

Որտեղից Երեւանի քաղաքապետին 250 միլիոն դրամ, 50 հազարական էլ եւրոյ եւ դոլար, եթէ ամսական մօտ 400 հազար դրամ աշխատավարձ է ստանում ու պնդում, որ եկամտուի այլ աղբիւր չունի: Տարիներ շարունակ ընդդիմադիրներին չի յաջողում ստանալ այս հարցի պատասխանը:

Բարձրաստիճան պաշտօնատար անձանց էթիկայի յանձնաժողովը հրապարակել է Տարօն Մարգարեանի 2014 թուականի յայտարարագիրը: Այստեղ միայն դրամական միջոցներն են:

Երկու տարի առաջ գլխաւորելով Հանրապետական կուսակցութեան համամասնական ցուցակը Մարգարեանը յայտարարագրել էր նաեւ բնակարաններ Երեւանում, ամառանոց Ջերմուկում, հողամաս Դիլիջանում, ավտոտնակներ ու շքեղ ավտոմեքենաներ: Դրանցից մէկը՝ Range Rover-ը քաղաքապետն անցած տարի վաճառել է 15 միլիոն դրամով, մօտ 156 միլիոն էլ Երեւանի քաղաքապետը ստացել է հողատարածքի դիմաց:

Միլիոնատէր է նաեւ Մարգարեանի գործադուրկ կինը: Չունենալով եկամտուի որեւէ աղբիւր՝ Գոհար Մարգարեանը անցած տարի պահպանել է 50 միլիոն դրամը: Կենտրոնական ընտրական յանձնաժողով ներկայացրած յայտարարագրում նա նաեւ նշել էր իրեն պատկանող սուպերմարկետ, տաքսի ծառայութիւն, պահածոներ ը գործարան, վեց տասնեակ



Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեան

կրպակներ, ու սա դեռ ամենը չէ: Ընդդիմադիր «Հայ Ազգային Գոնկրէս»-ը, գումարելով Տարօն Մարգարեանի գոյքն ու փողերը, մօտ 10 միլիոն դոլար էր գնահատել քաղաքապետի կարողութիւնը: 2013-ին նոյնիսկ Յատուկ Քննչական Ծառայութեանը դիմեցին՝ պարզելու ինչպէս է 37-ամեայ Մարգարեանը՝ ողջ կեանքում միայն պետական պաշտօններ զբաղեցնելով, դիզել կարողութիւն, որը չէր վաստակի, եթէ նոյնիսկ մինչեւ խոր ծերութիւն քաղաքապետ աշխատէր: ՀԱԿ պատգամաւոր Լեւոն Զուրաբեանը չի շեղեց՝ դատախազութիւնը մերժեց քրէական գործ յարուցել Մարգարեանի դէմ՝ ապացուցուած համարելով, որ այդ կարողութիւնը ձեռք է բերուել ապօրինի: Մինչդեռ ընդդիմադիր պատգամաւորը պնդում է՝ եթէ յայտնի չէ ունեցուածքի աղբիւրը, արդէն կայ հիմք քրէական գործ յարուցելու համար:

Քաղաքագետ Աշոտ Ընդդիմադիր ճամբարը Կը Փորձի Վերափոխուել

Հայաստանում արդէն այս տարուայ աշնանը քաղաքական ուժերը կը սկսեն ակտիւանալ, կարող են ստեղծուել նոր բլոկներ, ընդդիմադիր ճամբարը կը փորձի վերափոխուել: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է Կովկասի ինստիտուտի փոխտնօրէն, քաղաքագետ Սերգէյ Մինասեանը:

Նրա խօսքով՝ հայ հասարակութիւնում որոշակի ներադասնութիւն է գցեցուած: «Աշնանը մենք կարող ենք ակնատես լինել հետաքրքիր ներքաղաքական գործընթացների: Քաղաքական ուժերը կը փորձեն

պատրաստուել խորհրդարանական ընտրութիւններին», - ընդգծել է Մինասեանը:

Անդրադառնալով հարցին, թէ ներքաղաքական գործընթացների տեսանկիւնից ինչով է այս տարուայ աշնանը տարբերուելու նախորդ տարուայ աշնանից, քաղաքագետ պատասխանել է, որ ֆորմալ առումով, ընդդիմադիր դաշնը այս պահին գտնուում է առնուազն չոկային վիճակում, եւ գործունէութեան դաշտն այս պահին բաց է: «Դրանից ելնելով, ընդդիմադիր ճամբարը այս կամ այն չափով կը փորձի վերափոխուել», - յաւելել է նա:

Յայաստանը Գրեթէ Ամբողջովն Կորցրել Է Ռուսաստանէն Շուկան

«168 ժամ» թերթը գրուցել է ՀՀԿ-ական պատգամաւոր Աժ տնտեսական հարցերի յանձնաժողովի նախագահ, «ՄԱՊ» ընկերութեան սեփականատէր Ալեքսան Պետրոսեանի հետ:

Այն հարցին թէ ինչպէս է գնահատում Հայաստանում ստեղծուած տնտեսական իրավիճակը, Պետրոսեանը պատասխանել է. Ներկայումս Հայաստանը գրեթէ ամբողջովն կորցրել է ռուսաստանեան շուկան: Հիմնական պատճառն այն է, որ ռուսական ռուբլին արժէքզրկուել է գրեթէ 100 տոկոսով, այսինքն՝ մէկ դորաբի դիրն 30-ից դարձել է 60 ռուբլի, իսկ ՀՀ-ում դրամի արժէքը կորցրել է 20 տոկոսի չափով է: Մեր պետութիւնը չի կարող այս մեծ տարբերութեան պայմաններում ռուսական շուկայ ապրանք արտահանել: Այսինքն՝

այն ինքնարժէքով, որ մենք ՀՀ-ում ապրանք ենք արտադրում, այդ ինքնարժէքն արդէն անընդունելի է Ռուսաստանի համար՝ կապուած իրենց փոխարժէքի հետ: Իսկ ի՞նչ պէտք է անի հայ արտադրողները հարցին նա պատասխանել է, որ արտադրողները չեն կարող հենց այս պահին ինչ-որ բան անել: Պէտք է նստեն սպասեն, մինչեւ Ռուսաստանում տնտեսութիւնը լաւանայ, ռուբլին ուժեղանայ, բայց դա կարող է տեւել 3-5 տարի, իսկ ինձ չի թւում, թէ այս ընթացքում ՀՀ-ում որեւէ կազմակերպութիւն, որի ամբողջ գործունէութիւնը կապուած է ՌԳ-ի հետ, ապրանքի 90 տոկոսն արտահանում է ռուսական շուկայ, կարող է երկար դիմանալ: Ինքը չի կարող դիմանալ, կոչնչանայ»:

«Զէք Անցկացնի» Նախաձեռնութիւնը Կը Պայքարի Սահմանադրական Փոփոխութիւնների Դեմ

Սահմանադրական փոփոխութիւնների դէմ պայքարող «Զէք Անցկացնի» նախաձեռնութիւնը շուտով հանդիպումներ կունենայ նախկին ոչ իշխանական եռեակի անդամ կուսակցութիւնների հետ՝ ձգելու սահմանադրական փոփոխութիւնների մասին նրանց վերաբերմունքը:

Նախաձեռնութեան անդամ Արմէն Գրիգորեանը պատմեց, որ այժմ ակտիւ քննարկումներ են անցկացնում նաեւ քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչներին հետ: Նպատակը միատարրելն ու քննարկելն է, թէ ինչպէս պայքարեն մայր օրէնքի փոփոխութեան դէմ:

«Մենք եւս մէկ անգամ յտակեցնելու համար փորձելու ենք հանդիպել «Ժառանգութիւն», «Քարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնների հետ, ՀԱԿ-ը պարզ է, բայց նրանց հետ էլ կը հանդիպենք: Կը փորձենք աշխատել: Հիմնական սեկտորը, որ այս պահին մեծ պոտենցիալ ունի ու կարելի է աշխատել, քաղաքացիական հասարակութիւնն է», - ասաց Գրիգորեանը:

Գրիգորեանը վստահ է, որ սահմանադրական փոփոխութիւններ նախաձեռնելով՝ Սերժ Սարգս-

եանը պարզապէս ցանկանում է վերադարձնուել: Արձագանգելով այն չիշեցմանը, որ Սարգսեանը խոստացել է, թէ չի հաւակնելու ոչ նախագահի, ոչ էլ վարչապետի պաշտօնին, Գրիգորեանը նկատեց՝ Սարգսեանը ոչինչ չի ասել Աժ նախագահի պաշտօնի մասին: Ինչ վերաբերում է վարչապետի եւ նախագահի պաշտօններին, ապա Գրիգորեանի խօսքով՝ երաշխիք չկայ, որ Սարգսեանը կը կատարի իր խոստումը:

«Վստահել նրա ասածին դժուար է, որովհետեւ 3.5 տարի մենք գնում էինք Աստղայանի պայմանագրի ստորագրելու, բայց մի գիշերուայ ընթացքում յայտնուեցինք Մաքսային միութիւնում: Այստեղ վստահութեան հարց կայ, առաջին ինդիքը դա է», - ընդգծեց նա:

Քաղաքացիական հասարակութեան շատ ներկայացուցիչները հիմնականում վստահ են, որ Հայաստանում առկայ ինդիքները լուծելու համար սահմանադրութիւնը փոխել պէտք է: «Իրաւունքի եւ Ազատութեան Կենտրոնի» ղեկավար Վարդան Յարութիւնեանի կարծիքով՝ երկրի գլխաւոր օրէնքը մեղաւոր է, որ Հայաստանում այն կատարելու քաղաքական կամք չկայ:

ԼՈՒՐԵՐ

Պոլսահայ Պետրոս Շիրինոյլուն Թուրքիայից Փոխհատուցում Չի Պահանջում



Ստամպոլի հայկական «Սուրբ Փրկիչ» հիւանդանոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ Պետրոս Շիրինոյլուն յայտարարել է, թէ ինքը Թուրքիայից փոխհատուցում չի պահանջում, իր ուզածը հաշտութիւնն է:

Թուրքական «Սթար» պարբերականի հետ զրոյցում Պետրոս Շիրինոյլուն պատմել է, թէ իր պապը եւս 1915-ին է մահացել, երբ «մարդկանց խաբել են եւ ստիպել եղբայրն սպաննի եղբօրը»:

«Ես փոխհատուցում չեմ ուզում, ես միայն խաղաղութիւն եմ ուզում: Ես դէմ եմ, որ 1915-ը այսօր էս երկարացնում են: Պէտք է այդ հարցին վերջ դրուի: Շատ կարեւոր էր էրզրոյանի այն յայտարարութիւնը, որ Թուրքիայի արխիւները բաց են: Թող պատմաբանները միջամտեն: Թող Թուրքիայի եւ Հայաստանի սահմանները բացուեն: Այդ դէպքում եկամուտն աւելի շատ կը լինի քան փոխհատուցումից: Ստամպոլում մեծ թուով հայաստանցիներ են անօրինական աշխատում: Ես նրանց

Պոլսոյ «Սուրբ Փրկիչ» հիւանդանոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ Պետրոս Շիրինոյլուն

հարցով խօսել եմ էրզրոյանի հետ, իսկ վերջինս խոստացել՝ լուծել նրանց խնդիրները: Հիմա Քոնստանտնուպոլիսի իւրաքանչիւր հայաստանցիների երեխաների համար դպրոց կայ, որտեղ, մօտ 200 աշակերտ են սովորում: Այլ վայրերում էլ փոքր դպրոցներ կան», -ասել է Պետրոս Շիրինոյլուն:

Խորհրդարանու Տեղի ԵՆ Ունեցել «Եւրասիական Տնտեսական Հեռանկարներ».
Քննարկում Աժ-ում

Մարտի 31-ին Հայաստանի Ազգային ժողովում տեղի է ունեցել «Եւրասիական տնտեսական հեռանկարներ» միջազգային համաժողովի շրջանակում կազմակերպուած կլոր սեղան-քննարկումը, որին ներկայ են եղել ՀՀ-ն Աժ նախագահ Գալուստ Սահակեանը, ՌԴ ԴԺ Պետական դումայի նախագահ Սերգէյ Նարիշկինը, ՀՀ վարչապետ Յովիկ Աբրահամեանը, նախարարներ եւ պատգամաւորներ:

պիտակի եւ աշխատուժի ազատ տեղաշարժի գաղափարների վրայ հիմնուած եւ շահաւէտ յարաբերութիւնների զարգացման ձեւաչափ:

ՀՀ վարչապետը յաւելել է, որ Հայաստանը պատրաստակամ է համակարգային եւ ենթակառուցութեան քայլեր բարեփոխումների ընթացքում կուտակած իր փորձը ներդնել ինտեգրացիոն գործընթացների զարգացման համար: Նա ընդգծել է, որ մեր գերխնդիրն է արդարացնել ԵԱՏՄ անդամ երկրների ժողովուրդների ակնկալիքները եւ նկատելիօրէն բարձրացնել մեր քաղաքացիների կենսամակարդակն ու բարեկեցութիւնը:

ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման եւ բարեփոխումների նախարար Վաչէ Գաբրիէլեան անդադարձել է Հայաստանի անդամակցութեան առանձնաշատկութիւններին՝ նշելով, որ ծովի եւ ԵԱՏՄ անդամ երկրների հետ ընդհանուր սահմանի բացակայութիւնը լուրջ մարտահրաւէր է, եւ աշխարհագրական դիրքն իր որոշիչ դերն է խաղում մեր երկրի տնտեսական կեանքում:

Եւրասիական տնտեսական յանձնաժողովի կոլեգիայի անդամ կարինէ Մինասեանը խօսել է անդամակցութեան արդիւնքում Հայաստանին ընձեռուող նոր հնարաւորութիւնների մասին եւ նշել, որ մեր երկիրը պիտի ինտեգրուի այն ծրագրերին, որոնք արդէն մեկնարկել են ԵԱՏՄ անդամ միւս պետութիւններում: Նա նշել է, որ Հայաստանը մեծ ներուժ ունի յատկապէս գիւղատնտեսութեան եւ ղեզազորութեան ոլորտներում:

Այնուհետեւ ելոյթներով հանդէս են եկել ՀՀ եւ ՌԴ համապատասխան ոլորտների պատասխանատուները:

«Մենք Լիարժեքօրէն Վերահսկում Ենք Սահմանը». Սէյրան Օհանեան



ՀՀ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան սահմանային դիրքեր կատարած այցելութիւններէն մէկու ընթացքին

Սահմաններում շարունակական լարուածութեան միտում ենք մենք տեսնում, որը թելադրում է հակառակորդի կողմից. «Ա1+»-ի հետ զրոյցում ասաց Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը՝ աւելցնելով, որ դա կապ չունի, թէ այս կամ այն ժամանակահատուածում լարուածութիւնը թե՛ժանում է, թէ՛ նուազում. «Դա արտաշատու է տարբեր տիպի խախտումներով: 2015թ. Յունուարից այդ խախտումները տեղի են ունեցել՝ դիւերսիոն-հետախուզական գործողութիւններ, դիպուկահարների գործողութիւններ եւ ամենավերջին խախտումը, որ տեղի է ունեցել ԼՂՀ Պաշտպանութեան բանակում, ԼՂՀ հիւսիսային հատուածում՝ Մարտակերտի շրջանում, Մարտի 19-ին տեղի ունեցած դէպքը: ՊԲ ստորաբաժանումները կարողացել էին ըստ ստեղծուած իրադրութեան օպերատիւութեամբ արձագանգել ու ետ մղել եւ աւելին՝ արժանի հակահարուած տալ հակառակորդին»:

Ըստ նրա՝ վերջին օրերին կրակոցների քանակը բաւականին նուազել է, խախտումներ չկան. «Երեւի թէ իրենք իրենց որոշումների մէջ ճշգրտման են կատարում կամ փորձը ցոյց է տալիս, որ մեր դիրքապահների կողմից արժանի հակահարուածներն են, որ նուա-

զեցնում են մեր հարեւանների առաջին գծի կամ յատուկ նշանակութեան ստորաբաժանումների եռանդը, եւ նրանք մի որոշ ժամանակահատուած հանգստանում են: Մենք լիարժեքօրէն վերահսկում ենք սահմանը եւ հայ դիրքապահները պատրաստ են իրենց առջեւ դրուած խնդիրները բարձր մակարդակով կատարել»:

Ինչ վերաբերում է պայմանագրային գինձառայող Անդրանիկ Գրիգորեանի քայլին, որը սպիտակ դրօշը ձեռքին յանձնուել է ադրբեջանական կողմին, Սէյրան Օհանեանը նշեց. «Քրէական գործ է յարուցուել, ծառայողական քննութիւն ենք անցկացնում, ամբողջովին բացառւել, թէ որոնք են պատճառները, որ հայ դիրքապահն անցել էր ԼՂՀ Մարտուտու շրջանից դէպի հակառակորդի կողմ, անհարին է, քանի որ իր հետ պէտք է ունենալ կապ եւ ինքը կարող է ասել, թէ ինչ խնդիրներ կան: Գտնում եմ, որ ժամանակի ընթացքում կը պարզաբանուի քրէական գործի շրջանակներում: Այն, ինչ ցոյց էր տրուել ադրբեջանական կայքերով, հասկանալի է, որ շինծու դրուագներ են, եւ ակնյայտ երեւում է, որ անցնելու պահին նրա հետեւից մեր գինձառայողները հետեւել էին, տեսել էին, որ այդպիսի երեւոյթ տեղի էլ էր ունեցել»:

«Հայկական Ժամանակ». Սերժ Սարգսեանի խնդիրներից Մէկը ՉիՆաստանից Զէնք Գնելն Ե Եղել

Հայկական Ժամանակ» թերթը գրում է. «Լաւատեղեակ աղբիւրներից յայտնի դարձաւ, որ Սերժ Սարգսեանի՝ Մարտի 25-ից 28-ը Զինատան կատարած այցի հիմնական խնդիրներից մէկը արտօնեալ պայմաններով ՀՀ-ին գէնքի մատակարարման շուրջ պայմանաւորութեան ձեռք բերելն է եղել:

Յաջողութեամբ է արդեօք այս խնդիրը լուծել, թէ ոչ մեր ադբիւրները չեն մասնաւորեցնում: Փորձագէտները նկատում են, սակայն, որ Զինատանի հիւսիս-

արեւմուտքում բնակուող թիւրքալեզու փոքրամասնութիւնների սպարտիստական ձգտումները մշտապէս անհանգստացնում են Պեկինին: Իսկ Հայաստանը Զինատանի եւ Թուրքիայի արանքում գտնուող միակ երկիրն է, որը գերծ է թուրքական տարրից: Սա նշանակում է, որ Զինատան-Հայաստան ռազմավարական համագործակցութեան օբիեկտիւ պայմաններ կան. մնում է այն իրական գործակցութեան վերածելու հմտութիւններ եւ շնորհք ունենալ»:

Հայաստան Կը գայ Յեղասպանութիւն 250 Գիտնական

2015թ. Յունիսին Հայաստան կը ժամանի Յեղասպանութեան ուսումնասիրութեամբ զբաղուող շուրջ 250 գիտնական: Այս մասին Մարտի 30-ին, լրագրողներին յայտարարել է Յեղասպանութեան Թանգարան-ինստիտուտի տնօրէն Հայկ Դեմոյեանը:

Գիտնականները Հայաստան կը ժամանեն Յեղասպանութիւնն ուսումնասիրողները միջազգային ասոցիացիայի կոնֆերանսին, որը կայանում է 2 տարին մէկ անգամ:

2015թ. այն կը կայանայ Յուլիսի 8-12-ը:

Ամենից շատ գիտնականներ կը ժամանեն ԱՄՆ-ից: Քիչ չեն նաեւ Իսրայէլից եւ եւրոպական երկրներից ժամանող հետազոտողները: «Ընդհանուր առմամբ աշխարհագրութիւնը շատ լայն է: Կը ժամանեն աշխարհի գրեթէ բոլոր ծայրերից: Մասնաւորապէս սպասուում է, որ մէկական մասնակից կը լինի Բանգլադէշից եւ Հարավային Աֆրիկայից», - նշեց The Դեմոյեանը:

Թուրքական ամսագրի ապրիլեան համարը նուիրուած է Հայոց ցեղասպանութեանը

Թուրքիայում «Evrensel Kultur» ամսագրի ապրիլեան համարն ամբողջութեամբ նուիրուած է լինելու Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին: «Էվրենսել» լրատուական կայքը տեղեկացնում է, որ ամսագիրը 100-ամեայ ցաւը եւ ամօթը քննելու է պատմութեան, մշակոյթի եւ արուեստի դիտանկիւնից: Հասկանալու համար, թէ թուրքերը առանց հայերի ինչ են կորցրել, պէտք է հարցը քննեն ոչ միայն խղճի եւ բանականութեան, այլեւ պատմութեան, լեզուի, արուեստի, արհեստների, գրականութեան եւ միւս «հարստութիւնների» պրիզմայի միջով, որոնք մարդուն մարդ են դարձնում:



նուիրուած թուրքական կինոյի հայ վարպետներին, թուրքական թատրոնում հայերի դերակատարութեանը, հայկական երաժշտութեանը, թուրքական վիպագրութեան մէջ հայի կերպարին եւ Հայոց ցեղասպանութեան ընկալումներին:

Ամսագրում հրատարակուելու են յայտնի լրագրողների, գրողների յօդուածները, որոնք կը ներկայացնեն հայերի բացակայութիւնից առաջացած դատարկութիւնը: Ընթերցողի դատին են յանձնուելու յօդուածներ, որոնք պատմելու են տարբեր բնագաւառներում հայերի ունեցած ներդրումների մասին: Մասնաւորապէս բնասէր Նէջմիլէ Ալիֆայն իր յօդուածում ներկայացնելու է լեզուագիտութեան բնագաւառում հայ լեզուաբանների ունեցած դերի մասին՝ սկսած թուրքական լեզուագիտական ընկերութեան առաջին գլխաւոր քարտուղար Յակոբ Դիլաչարից (Մարթայեան) մինչեւ Սեւան Նշանեան:

Ամսագրում կը ներկայացուի «20 կախաղան» յուշապատումի մասին պատմող յօդուած: Հեղինակը հայ հոգեւորական Գալուստ Պօղոսեանն է, ով գրել է 1915 թուականին Հնչակեան կուսակցութեան 20 անդամների մահապատժի մասին, որին անձամբ է ականատես եղել: Գիրքն առաջին անգամ հայերէն տպագրուել է 2021 թուականին: Այժմ «Էվրենսել» հրատարակչութիւնը պատրաստում է գիրքը հրատարակել թրքերէն:

Նաեւ կը լինեն յօդուածներ՝

Ֆրանքոֆոնի Նախագահները Կոչ Կ'ընեն

Շարունակուած էջ 1-էն

տապարտելով Հայոց Յեղասպանութիւնը յայտարարութիւն մէջ մասնաւորապէս ըսած են. «Մենք, ֆրանսերէնը որպէս ընդհանուր լեզու գործածող պետութիւններու խորհրդարաններու ներկայացուցիչներս, 2015-ի Մարտի 31-ի Եւրոպայի տարածաշրջանի Ֆրանքոֆոնի խորհրդարանական վեհաժողովի նախագահներու համաժողովի ընթացքին հաւաքուելով եւ հաստատելով մեր պարտաւորութիւնները ի շահ խաղաղութեան, ժողովրդավարութեան, մարդու իրաւունքներու, Ֆրանքոֆոնի տարածքին անվտանգութեան եւ համաշխարհային արժէքները քաջալերելութեան, ինչպէս նաեւ հետամուտ ըլլալով ՄԱԿ-ի միջազգային իրաւունքի սկզբունքներու Հռչակագրին, ընդգծելով, որպէս Յեղասպանութեան ոճրագործութիւն որակաւորուած գործողութիւններու մինչ այսօր համաշխարհայնօ-

րէն ճանչցուած չըլլալու անընդունելիութիւնը եւ չի շեղելով, որ նման ոճրագործութիւնը վաղեմութեան ժամկէտ չունի, կը դատապարտենք հայ ժողովուրդի նկատմամբ Օսմանեան կայսրութեան մէջ գործադրուած ցեղասպանութեան փաստը, կ'ոգեկոչենք 1915-ի Հայերի Յեղասպանութեան անմեղ զոհերու յիշատակը եւ համերաշխ ենք Հայաստանի եւ հայ ժողովրդի հետ՝ Յեղասպանութեան համաշխարհային ճանաչման եւ այդ ցեղասպանութեան ենթարկուած անձերու իրաւունքներու վերականգնման համար մղուող պայքարին մէջ:

Կը հրաւիրենք թուրքիային դէմ-դիմաց զայլու սեփական պատմութեան հետ եւ ի վերջոյ ճանչնալու Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը եւ յոյս կը յայտնենք, որ այդ ճանաչումը հայ եւ թուրք ժողովուրդներու միջեւ հաշտեցման մեկնակէտ կը հանդիսանայ»:

ՈՒԻԼՅԵԼՍ 2-ՐԴ ԿԱՅՍԵՐ ԾՈՌԸ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ Է ԽՆԴՐԵԼ ԶԱՅԵՐԻՑ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՐՑՈՒՄ ՊԱՊԻ ՍԵՂԱԿՑՈՒԹԵԱՆ ԶԱՍԱՐ



Մարտի 27-ին Գերմանիայի «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի կենտրոնակայանում կայացաւ Պոտսդամի Յոհաննէս Լեփսիուսի տուն-թանգարանի գիտական ղեկավար Ռոլֆ Հոսֆելդի «Մահը անապատում. Հայերի ցեղասպանութիւնը» գրքի շնորհանդէսը. տեղեկացնում է ՀՀ ԱԳՆ-ն:

Միջոցառմանը ներկայ էին Գերմանիայի Բունդեսթագի պատգամաւորներ, Գերմանիայում հաւատարմագրուած դեսպաններ, հասարակական-քաղաքական գործիչներ, դիւանագէտներ, գրաքննադատներ, հրատարակիչներ եւ լրագրողներ:

Միջոցառմանը ողջոյնի խօսքով ներկաներին դիմեց «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի մշակութային ծրագրերի ղեկավար Ռիտա Շոպպը: Ելույթով հանդէս եկաւ նաեւ Բունդեսթագի պատգամաւոր էրիկա Շտայնբախը՝ կոչ անելով իր կուսակիցներին՝ բարձրաձայնել Հայոց ցեղասպանութեան մասին, ճանաչել եւ դատապարտել այն:

Մարտի 29-ին Պեռլինի «Կայսր Ուիլհելմ» յիշատակի բողոքական եկեղեցում տեղի է ունեցել Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառում: Ներկաներին ողջոյնի խօսքով են դիմել նշեալ եկեղեցու քահանայ Կորնելիա Կուլավիկը եւ Հայ Առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Պեկչեանը:

Այնուհետեւ ելույթ է ունեցել Պեռլինի բողոքական եկեղեցու քահանայ, Պրուսիայի արքայազն Ֆրիւպ-Կիրիլը, որը Գերմանիայի վերջին կայսր Ուիլհելմ Երկրորդի ծոռն է: Ֆրիւպ-Կիրիլն իր ելույթում ներողութիւն է խնդրել հայերից՝ նշելով. «Ես գիտեմ, որ Հայոց ցեղասպանութեան զոհերի եւ նրանց յետորդների ցաւն անդառնալի է, սակայն խնդրում եմ՝ եթէ կարող էք, ներքե՛ք նաեւ իմ պապին՝ Կայսր Ուիլհելմին»: Միջոցառման աւարտին ելույթով ներկաներին է դիմել նաեւ Գերմանիայում ՀՀ գործերի ժամանակաւոր հաւատարմատար Աշոտ Սմբատեանը:

Քալենք Հայոց Յեղասպանութեան Արդարութեան Համար

- Շարունակուած էջ 1-էն
- ՍԱՆԹԱ ԱՆԱ
 - *Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցի - 5315 W. McFadden
 - ԿԱՆԳԱՌ ԵՒ ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆ
 - * Dolby Theatre - 6801 Hollywood Blvd. Hollywood
 - * Los Angeles Convention Center 1201 S. Figueroa St. Los Angeles
 - * North Hollywood Metro Station 5273 Lankershim Blvd. Hollywood
 - «Ով Հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժին մէջ է»:
 - Կոչ կ'ողղենք համայնքի բոլոր գաւակներուն, պահելով համազգային ոգին, Ապրիլ 24, առաւօտեան ժամը 10-ին, միանան մեզ Լոս Անճելըսի Sunset եւ Western պողոտաներու խաչմերուկին, որպէսզի միասնաբար քալենք արդարութեան համար:
 - Հայոց Յեղասպանութեան 100Ամեակի Յարաբերական Յանձնախումբ ԱՄՆի Արեւմտեան Շրջան

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065

Dr. Missak Ekmekdjian
Chiropractor

Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու և մանուկներու Բայթոփոքթիք բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային և մկանային ցաւեր:
Բնքնաշարժի վթարի հետեւանքով պատահած վնասուածքներու բուժում:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՄԻՋԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵ ԸՆԿ. ԵՂԻԿ ԵՐԻՔԵԱՆԻ ԽՕՍԱԾ ԴԱՄԲԱՆԱԿԱՆՆԸ ԸՆԿ. ՊԵՊՕ ՍԻՄՈՆԵԱՆԻ ԹԱՂՄԱՆ

Սզակիր բարեկամներ, սզակիր ընկերներ,

Տարին քանի մը անգամ, կը ստիպուինք իրար հանդիպիլ այս տիրուր վայրին մէջ: Այս անգամ կարգը ընկ, Պէպոյինն էր:

Դժուար չէ Պէպո Սիմոնեան մարդուն մասին քանի մը վայրկեան դամբանական խօսիլը: Դժուար չէ նոյնիսկ Պէպո Սիմոնեան մարդուն մասին քանի մը ժամ բանախօսութիւն կատարելը: Անոր ապրած բազմաբնոյթ, լիարժէք, արտադրող եւ արդիւնաւետ կեանքին առարկայական տուեալներուն թուարկումը միայն, կրնայ էջեր լեցնել: Գրող, մշակութային գործիչ, կրթական մշակ, խմբագիր, ազգային-հասարակական գործիչ, կուսակցական ղեկավար:

Գրող ըլլալէ առաջ Պէպո Սիմոնեան գրականագէտ էր: Ժամ առ ժամ կը հետեւէր ժամանակակից հայ գրականութեան: Կ'ուրախանար նոր անուններով՝ յատկապէս եթէ անոնց մէջ տեսնէր ինքնատիպութիւն մը: Լաւ գիտէր հայ գրականութեան պատմութիւնը, հայ դասականները: Ան բանաստեղծ էր իր խառնուածքով, բայց նաեւ արձակագիր, հրապարակագիր, յօդուածագիր: Շուրջ 15 գիրքի հեղինակ Պէպո Սիմոնեանի գրչին կը պատկանին նաեւ հարիւրաւոր յօդուածներ, որոնց մէջ իր ուրուց տեղը ունի Արարատ օրաթերթի «Մշակութային էջը»-ը: Հայ մշակութային կեանքը, իր անցեալով եւ ներկայով, Հայաստանով եւ Սփիւռքով կարտացոլան այդ էջերուն մէջ: Գրասէր, գրքասէր եւ ընթերցասէր էր Պէպո Սիմոնեան բառի ամենէն ծայրահեղ իմաստով: Անկարելի էր որ լոյս տեսնէր հայերէն լեզուով նոր հրատարակութիւն մը, որ չանցնէր անոր ձեռքերուն մէջէն: Վերջերս, Հայաստանի մէջ, իրեն ծանօթ մտաւորական մը հարցուց անոր առողջութիւնը: Որպէսզի երկարօրէն չբացատրեմ, «չի կարդար» պատասխանեցի: Կարճ մտածումէ մը յետոյ «պարզ է», պատասխանեց խօսակիցս: Վերջին օրերուն, իմացալ թէ ան չ'ուտէր եւ չի խմէր:... Ինչո՞ւ գարմանալ, երբ ատկէ առաջ արդէն Պէպոն չէր կարդար...

Կրթական ասպարէզը եղաւ Պէպո Սիմոնեանի կեանքի ասպարէզը: Նուիրուեցաւ հայերէն լեզուն եւ գրականութիւնը աշակերտին սիրելի դարձնելու եւ

սորվեցնելու պաշքարին: Այս օրերուն համար իրական պաշքար մը՝ որմէ յաղթական դուրս գալը ամէնուն տրուած չէ: Իր վարչական կարողութիւններուն շնորհիւ, ուսուցչութեան կողքին ան ստանձնեց նախ Ազգ. Ռուբինեան վարժարանի եւ ապա ՀԿԲՄ Մահակեան Լ. Մկրտիչեան Գոլէճի տնօրէնի պաշտօնները: Անոր առօրեան նոյնացաւ Մահակեանի կրթական հեւքին հետ:

Պէպո Սիմոնեանին համար ըսել մշակութային գործիչ՝ կը նշանակէ ոչինչ ըսել: Ան կ'ապրէր ու կը շնչէր հայ մշակութիւնը: Մշակութիւնը Պէպո Սիմոնեանի էութիւնն էր, անոր ապրելաձեւը, կեանքի ըմբռնումը: Մշակութիւնը նաեւ ազգային գէնք էր, որմով պարտաւոր էինք պաշքարիլ ձուլման, այլասեւման եւ նահանջին դէմ: Ու բնաւ պատահական չէ որ 1955 թուականին, տակաւին շատ երիտասարդ Պէպո Սիմոնեան, խումբ մը մշակութասէր ընկերներու կողքին իր մասնակցութիւնը կը բերէ Նոր Սերունդ Մշակութային Միութեան հիմնադրութեան աշխատանքներուն: Ապա երկար տարիներ ան կը ստանձնէ Միութեան աստեալեակի պարտականութիւնը: Պէպո Սիմոնեանի օրինակով Նոր Սերունդներ կը ծնին տարբեր գաղութներու մէջ:

Երիտասարդ տարիքին, Պէպո Սիմոնեան անդամագրուելով Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Ուսանողական շարժումին, աստիճանաբար կը բարձրանայ ղեկավար մարմիններու սանդղամասներէն: Երկար տարիներ մաս կը կազմէ ՄԴՀԿ Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմին. կը մասնակցի ներկուսակցական, միջկուսակցական ու համազգային բնոյթի տարբեր մարմիններու:

Ընկ. Պէպոն գաղափարապաշտ մարդն ու ղեկավարն էր: Ան լուսապէս իւրացնելով հնչակեան գաղափարախօսութիւնը, իր մէջ գեղեցկօրէն համադրած էր ազգային ու համամարդկայինը: Կը պաշտպանէր Հայ Դատը, կը պաշքարէր Յեղասպանութեան ճանաչման ի խնդիր ոչ միայն անոր համար, որ աստիճանաբար հայ ժողովուրդին գերագոյն հարցերն են, այլ նաեւ անոր համար, որ աստիճանաբար ու մարդկայնական դատեր են: Խտրականութեան դէմ պաշքարի խորհրդանիշ դարձած Նելսոն Մանտելլայի ազատ արձակումը, պաղեստինցի ժողո-

վուրդին բռնագրաւուած հայրենիքին վերադարձը կամ վիէթնամի դէմ Ամերիկայի սանձազերծած վայրագ պատերազմին դադարեցումը կը յուզէին զինքը եւ այդ բոլորը կը դառնային անոր խոհերուն առարկաները եւ գրականութեան նիւթերը: Պէպո Սիմոնեանին համար որեւէ գաղափարախօսութեան, քաղաքականութեան կամ հասարակական մտածելակերպի կեղոռնական առանցքը մարդը պէտք է ըլլար՝ առանց ազգի, կրօնքի, գոյնի եւ սեռի խտրութեան: Մարդը պէտք է անարդարութենէ, բռնութենէ եւ շահագործումէ: Իսկ մտածող մարդը, մտաւորականը, արուեստագէտը պէտք է ամբողջական ազատութիւն ունենային մտածելու եւ իրենց համոզումները ազատօրէն արտայայտելու: Ան խաղաղասէր ու մարդասէր էր. Լիբանանեան քաղաքացիական պատերազմին նուիրուած անոր գրական էջերը, ներձուած են այս արժէքներուն հանդէպ խորունկ հաւատքով: Պէպո Սիմոնեան հաւատաւոր կուսակցական էր, բայց ոչ կուսակցամոլ. անոր մօտ միշտ ալ գերադաս էր համազգային մտածելակերպը: Ան բաց էր. կը յարաբերէր եւ կը գործակցէր բոլորին հետ, յատկապէս ընդհանրական հարցերու եւ մտահոգութիւններու շուրջ:

Պէպո Սիմոնեան թունդ հայրենասէր էր. Հայաստանասէր մը: «Հոն Արարատի փէջերուն պիտի գարնենք մեր վրանները» պատգամին հաւատաւոր ուխտեալ մը: Կ'ուրախանար Հայաստանի յաջողութիւններով՝ յատկապէս գրական եւ մշակութային ասպարէզներէն ներս: Կը տրամէր անոր սայթաքումներով եւ ձախողութիւններով: Կը քննադատէր սխալները՝ յանձնառու մտաւորականի մը քաղաքացիական կեցուածքով: 60-ական թուականներէն արդէն, երբ տակաւին այսօրուան արդիական կապի միջոցները չկային, Պէպո Սիմոնեան, Հայաստան կատարած իր այցելութիւններով թէ Լիբանան այցելած մտաւորականներու եւ մշակութային խումբերուն հետ իր ստեղծած բարեկամական յարաբերութիւններով, կենդանի կապ մըն էր Հայաստանի հետ: Եւ ան, այդ կապին դրական լիցքաւորումէն, իր ոգեւորութիւններէն բաժին կը հանէր իր շրջապատին՝ ընկերներուն, հարազատներուն, աշակերտներուն: Անցնող տարիներուն, ամէն Հայաստանէն վերադարձիս, այցելութեամբ կամ հեռաձայնային կապով անոր կը պատմէի տեսածներս, վերջին նորութիւնները: Ինչ մեղքս պահեմ, միայն

լաւ բաները կ'ըսէի, դրականները: Հաւանաբար այդ վիճակին մէջ ընկ. Պէպոն դրական գրգիռներու, ոգեւորութեան պէտքը ունէր... կ'ընէի այնպէս, ինչպէս ժամանակին ինք կ'ընէր մեզի:

Պէպո Սիմոնեան Լիբանանի պարկեշտ քաղաքացին էր. քաղաքացիական գիտակցութեան տէր մտաւորականը. կը սիրէր իր ծննդավայր հայրենիքը: Անոր «Մայրներու Արմատները» գիրքի գինեծօնին, երոյթ ունեցող լիբանանցի արաբ մտաւորականը ըսաւ.- «Շատ կարգացած եւ մայրիներէն ներշնչուած եւ անոնց նուիրուած բանաստեղծութիւններ, որոնք կը գովերգեն մայրիներուն յաւերժութիւնը, անոնց մշտադալար կանաչը, դարաւոր անցեալն ու գեղեցկութիւնը: Սակայն առաջին անգամ ըլլալով ծանօթացայ մայրիներու արմատներուն նուիրուած բանաստեղծական հատորի մը՝ եւ այդ գրուած հայու մը կողմէ: Հայերը, կարճ ժամանակի մը մէջ ինչքա՞ն հայրենասիրութիւն կուսակած էք Լիբանանին հանդէպ: Հաւանաբար այդ կու գայ հայրենի հողը կորսնցուցած, հայրենի հողին յարգը գիտցող, հայրենակարօտ մարդուն տագնապներէն, որմէ բնականաբար լիբանանցիներս չունինք: Միայն այդ ձեւի մարդիկ կը համարձակին իրենց բանաստեղծի աչքերով հողին ընդերքը թափանցել»:

Պէպո Սիմոնեան խոհուն, միաժամանակ զգացողական մարդն էր: Կը խօսէր՝ կարեւորութիւն տալով օգտագործած իւրաքանչիւր բառին. բայց կը խնդար կուշտուկուռ, առանց սահմանի: Ճշգրտապէս, օրինասէր եւ ղեմացիին լսող: Մտաւոր պաշարով եւ կեանքի փորձով հարուստ, հաճելի գրուեցակից էր ան: Անկախ անձէն, կը յարգէր հասարակական կեանքին մէջ ենթակային զբաղեցուցած պաշտօնը:

Սզակիր բարեկամներ, Հայ ժողովուրդը այս տարի կը նշէ Հայկական Յեղասպանութեան 100 ամեակը: Ասոր գուզահեռ, հնչակեաններս, եւ մեզի հետ բոլոր անոնք որոնք յարգանք ունին հայ ազգային ազատագրական շարժման լաւագոյն աւանդութիւններուն հանդէպ, երկիրդալի պարտականութիւնը ունինք նշելու նաեւ 20 Կախաղաններու 100 ամեակը: Այդ ծիրէն ներս, Կեղոռնական վարչութիւնս որոշում ընդունեց, 20 Կախաղաններու 100 ամեակի պատուոգրերով վարձատրել իրենց վաստակաշատ անցեալով ծանօթ խումբ մը ընկերներ: Սահմանափակ

Շար. ք էջ 19



Bedros S. Maronian 818/500-9585

Siamanto B. Maronian 818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B



Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

**ՄԱՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
«ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱԳԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿԻՆ
ՀԱՄՈՉՈՒԱԾ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ»
ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍ**


Կիրակի, Ապրիլ 12-ի Կ.Ե. ժամը 5-ին, Փաստախնայի ՀԿԲՄ-ի կեդրոնին ներս տեղի պիտի ունենայ «Հայրենիքի Ագատագրութեան Բանակին Համոզուած Զինուորները» նոր հրատարակուած գրքի շնորհանդէսը: Այս առթիւ ժընեւէն Լոս Անճելըս պիտի ժամանէ գրքի հեղինակ Դոկտ. Աբէլ ԲՅՆՅ. Մանուկեան:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Տեղեկատուութեան Դիւանի կազմակերպութեամբ տեղի ունենալիք միջոցառման ընթացքին ելոյթ պիտի ունենայ պատմաբան Դոկտ. Կարօ Մոմճեան, ներկայացնելով ժամանակաշրջանի՝ 19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդ դարու սկզբնաւորութեան հայ ժողովուրդի դիմագրաւած մարտահրաւէրները:

Գիրքը հանգամանօրէն պիտի ներկայացնէ յայտնի մտաւորական եւ հրապարակագիր Ոսկան Մխիթարեան:

Ելոյթ պիտի ունենայ նաեւ հեղինակը, որ այս հրատարակութեամբ ի մի բերած է Հնչակեան Քսան Կախաղաններու մասին գուրգուրանական մամուլի արխիւային նիւթերը:

Գիրքը լոյս տեսած է Տէր եւ Տիկին Վազգէն եւ Հայկօ



Գալթագճեաններու մեկենասութեամբ:

Հանդիսութիւնը պիտի վարէ ՍԳՀԿ Վարիչ Մարմինի անդամ Սուրէն ԽՈՒՏԱՆԵԱՆ: Պիտի գործադրուի պատշաճ զեղարուեստական յայտագիր: Աւարտին պիտի կատարուի հիւրասիրութիւն:

Մուտքը ազատ է եւ հրաւիրուած է հայ ժողովուրդը:

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵՆԷՆ**

Սիրելի Բարեկամներ,
Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը (ԱՀԱԸ) կը շարունակէ հաւատարիմ մնալ իր թափանցիկ ըլլալու կոչումին, պատասխանատուութեան իր ուժեղ գիտակցութեան եւ իմաստուն կերպով իրեն վստահուած նիւթական միջոցները կառավարելու յանձնառութեան:

Վերջերս, ներքին հետաքննութիւններ բացայայտեցին կարգ մը զեղծարարութիւններ եւ նուիրուած գումարներու իւրացում? Նախկին պաշտօնեայի մը կողմէ:

Իրաւապահ մարմինները անմիջապէս տեղեկացուեցան, որոնք հարցը հետազօտելէ եւ քննելէ ետք ձերբակալեցին նախկին պաշտօնեան: Աւետարանչականը կը շարունակէ սերտօրէն գործակցիլ իրաւապահ մարմիններուն հետ հետապնդելու այս հարցը, ամէն ջանք թափելով եւ հնարաւոր բոլոր միջոցներով վերականգնելու ապօրինի ձեռով իւրացուած նիւթական կորուստները:

Միեւնոյն ժամանակ որդեգրուեցան շարք մը ներքին վերահսկողութեան միջոցներ, խուսափելու ապագայի նմանատիպ միջադէպերէ: Գործակցելով մեր հաշուէքննիչներուն հետ, պիտի շարունակենք ուսումնասիրել մեր գործարարները, որպէսզի ամէն գնով ապահովենք ուղղամտութիւն հաստատել՝ նիւթական մեր բոլոր գործունէութիւններուն մէջ:

Հայ Աւետարանչական Ընկերակցութեան տնօրէնութեան գլխաւոր նպատակն ու պատասխանատուութիւնն է պահպանել երկար տարիներու իր ուղղամտութեան համբաւը եւ վստահեցնել իր նուիրատուներուն, թէ իւրաքանչիւր նուիրուած լուծման կը գործածուի անոնց ցանկացած նպատակին: Ոչ մէկ ջանք եւ եռանդ պիտի խնայենք ցուցաբերելու ԱՀԱԸ-ի հաւատարմութիւնը եւ հաստատամտութիւնը իր այս կոչումին:

Կը խոստանանք մեր նուիրատուներուն որ վճռակամութեամբ պիտի շարունակենք հետաքննութեան ամէն աշխատանք, մինչեւ բոլոր համապատասխան փաստերով բացայայտենք եղածը եւ մեր բոլոր նուիրատուներուն ցանկութիւնները լիով իրականացնենք:

Ինչպէս միշտ, կը խնդրենք որ ընդունիք մեր սրտագին երախտագիտութիւնը ձեր շարունակական աջակցութեան եւ աղօթքներուն համար:

Անկեղծօրէն՝
ԶԱԻԷՆ ԽԱՆՃԵԱՆ, Գործադիր Տնօրէն

**ՄԵՔՍԻՔՈՅԻ ՄԵՁ
ՄԻԱՑԵԱԼ ՈԳԵԿՈՉՈՒՄ
ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ**

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէր-տէրեան

Կիրակի, Մարտ 15ի կէսօրին Մեքսիքայի հայ համայնքը եւ Գալիֆորնիայէն ժամանած պատուիրակութիւնը՝ Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան, միջ-եկեղեցական պաշտօնեաներ՝ միջ-կրօնական պաշտօնեաներ Հրէական Հաւատքէն, մասնակցեցան Մեքսիքայի Մայր Տաճարին մէջ մատուցուած Սուրբ Պատարագին: Պատարագին էր Գերաշնորհ Կարտինալ Նորպրեթօ Ռիվերա Գարերա՝ Մեքսիքոյի Կաթօլիկ Եկեղեցւոյ Արքեպիսկոպոսը:

Սուրբ Պատարագի արարողութիւնը հեռասփռուեցաւ Մեքսիքայի հեռատեսիլէն: Արարողութեան աւարտին Մեքսիքայի Հայ Համայնքը եւ պատուիրակութիւնը Գալիֆորնիայէն մաս կազմեցին պատմական կեդրոնի Մշակոյթի Թանգարանին մէջ տեղի ունեցած հիւրասիրութեան:

Թեմի հոգեւորականներու մասնակցութեամբ Առաջնորդ Սրբազան Հայրը օծումը կատարեց խաչքարի մը, որ Արեւմտեան Թեմի կողմէ նուիրուեցաւ "National Museum of Civilization"ի: Սոյն Արարողութեան ներկայ էին Գարլոս Վազգէզ Օլիւերա՝ Վարիչը Մեքսիքայի Մշակութային Ազգային Թանգարանի, անդամներ Մեքսիքայի հայ Համայնքի, ինչպէս նաեւ Լոս Անճելըսի պատուիրակութիւնը: Հայոց Յեղասպանութեան մասին պատմական գիրքեր եւս նուիրուե-

Մ.Գ.Ն.Կ.-ի Տեղեկատուութեան Դիւանի Նախաձեռնութեամբ՝

ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍ

ԴՈԿՏ. ԱԲԷԼ ԲՅՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

«Հայրենիքի Ագատագրութեան Բանակի Համոզուած Զինուորները»

Գրքի հրատարակութեան Առթիւ

Խօսք կ'առնէ
ԴՈԿՏ. ԿԱՐՕ ՄՈՄՃԵԱՆ

Հատորը կը ներկայացնէ
ՈՍԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ելոյթ կ'ունենայ
ԴՈԿՏ. ԱԲԷԼ ԲՅՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Տեղի կ'ունենայ
Կիրակի, Ապրիլ 12, 2015
Կ.Ե. ժամը 5:00-ին

ՀԿԲՄ-ի Կարօ Սողանալեան սրահ
1060 N. Allen Ave., Pasadena

ԶԱՏԻԿԸ՝ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՇԽԱՐՀԻ ՀԱԲԱՏՔԻ ՏՕՆՆ Է

«ԵՆ լուսաւորեցէ զԲեզ Քրիստոս» (Եփես. Ե. 14)

Յարուսթեան Տօնը՝ հաւատքի տօնն է: Աշխարհի Փրկիչը իր անսուտ խոստումին համաձայն պատարագուեց եւ իր հրաշալի յարուսթեամբ մեզ նոր կեանք պարգևեց: Քրիստոնեայ Եկեղեցին յաղթականորէն եւ մեծ ցնծութեամբ կը տօնախմբէ Ձատիկը նախա-եւառաջ՝ որպէս հաւատքի կեանք եւ վերածնունդի օր, որ առ-հաւատչեան է մեր փրկութեան՝ աչքան ատեն, որ աներկբայ ենք խորհուրդին յարուսթեան:

Երկու հազար տարի առաջ մարդկութեան կեանքը իր անկրկնելի հրաշքը ապրեցաւ, երբ Քրիստոս Աստուածորդին իր Յարուսթիւնը դարձուց ճանապարհը նոր կեանքին, որուն հիմքը կը ներկայանայ հոգեւոր ու բարոյական վերածնունդը: Քրիստոսի յարուսթեան խորհուրդն է, որ կը տօնենք մեր կեանքին մէջ, երբ մեր միտքն ու հոգին կը կեդրոնացնենք աստուածային վրայ, որուն ներշնչումով ալ կ'ըմբռնենք, որ ստեղծուած ըլլալով Աստուծոյ պատկերին համաձայն, հաւատքի գորութեամբ կարողութիւնը ունինք հրաշագործելու մեր կեանքը:

«ԵՆ լուսաւորեցէ զԲեզ Քրիստոս»:

Ձատիկը տօնել կը նշանակէ լուսաւորել մեր կեանքը Քրիստոսով: Այլեւ ապրիլ Քրիստոսի հետ, Անոր նմանակցութեամբ իմաստաւորելու ու արժեւորելու մեր կեանքը Աւետարանէն ճառագայթող պատգամներով, որոնք կը նորոգեն մեր հոգեւոր կեանքը: Եկեղեցու լուսամտի հայրերէն Հոգեւոր Պատրիարք Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հետեւեալ խորհրդածութիւնը կը կատարէ խորապէս բացատրելու համար Քրիստոսի Յարուսթեան կենսական կարեւորութիւնը մարդկութեան կեանքին ներս. «Աշխարհը ծերացել էր ոչ մտքով կամ ճաշակով, այլ բարոյապէս: Նա չէր կարօտում գիտութեան, գեղարուեստին, այլ բարոյական գաղափարների, աշխարհը բարոյապէս փտտած էր՝ ճիշտ այնպէս, ինչպէս եւ այսօր, եւ կարօտում էր բարոյական վերածնութեան»:

Այսօր, Քրիստոսի Յարուսթեան խորհուրդին ակնդէտ՝ մենք մեր կեանքը կը նորոգենք, երբ մեր կեանքի ընթացքը կը պայմանաւորենք Քրիստոսի ուղեգծած լոյսի ճանապարհով: Բաւական է, որ հետեւինք Քրիստոսի պատուիրաններուն, որպէսզի լուսաւորուինք հոգեւոր ու բարոյական վերածնունդով: Սբ. Յարուսթեան Տօնին նախորդող քառասուն օրերու աղօթքի, պահանջողութեան ու հոգեւոր սերտողութեան ամբողջ ժամանակահատուածը մարդու հոգին լուսաւորող ճանապարհորդութիւնն էր: Եկեղեցու հայրերուն կողմէ մեզի ներկայացուող աւետարանական պատգամները կեանքի կոչելով մենք կը բարձրանանք առ Աստուած, որպէսզի կեանքը ապրինք Աստուծոյ նմանութեան տեսիլքով:

Յաւօք, այսօրուան աշխարհի պատկերը Աստուծոյ աչքէն հեռու ապրուած կեանքը կը ներկայացնէ, երբ մարդը իր մէջ կորսնցուցած ըլլալով հոգեւոր ու բարոյական

արժեքներով ապրելու գիտակցութիւնը, իր մէջ կը կործանէ Աստուծոյ պատկերը, կը խոնարհի ժամանցելի արժեքներու առջեւ եւ կը մոռնայ իր ճշմարիտ պատկանելիութիւնը, Աստուծոյ պատկանելու խորհուրդը, Աստուծոյ կամքը կատարելու առանձնաշնորհումը:

Միւս կողմից, Քրիստոսի Յարուսթեան խորհուրդով ապրինք մեր կեանքը, ինչպէս եղաւ կեանքի ճանապարհը մեր նախնեաց, եւ ի մասնաւորի՝ նահատակ սերունդին, որոնք հաւատքի կեանքով առաջնորդուած կեանք մը ապրեցան: Անոնց պատարագումը դարձաւ հոգեւոր ժառանգութիւնը մեր կեանքին: Անցնող հարիւր տարիներու կեանքը աշխարհացրիւ մեր հայութեան կը խորհրդանշէ Յարուսթեան խորհուրդը: Յարուսթեան խորհուրդը պիտի ապրինք գործնապէս որպէս քրիստոնեայ հաւատացեալներ, մեզմէ ամէն մէկուն էութիւնը դարձնելով Հայրենիքի ներկայութիւնը, որպէս կրողը նահատակ սերունդի տեսիլքին: Եթէ Ձատիկը քրիստոնեայ աշխարհին հաւատքի տօնն է, ապա մեր ազգի զաւակները Ձատիկը ճառագայթած են իրենց կեանքով անցնող հարիւր տարիներու կեանքը արդարացնելով նոր արարումներով ու ստեղծագործ կեանքով: Այս օրերուն Հայոց Յեղասպանութեան հարիւր ամեակի ոգեկոչումը եւ նահատակաց սրբադատումը արթնութեան նոր կոչ են բոլորիս համար, որպէսզի շարունակենք ապրիլ Յարուսթեան խորհուրդով, որուն արգասիքը՝ հաւատքի գորութիւնն է:

2008 թ.-ի Դեկտեմբերին, երբ նա ի վերջոյ որոշեց իր տրամադրութեան տակ եղած վաւերագրերը հրապարակել «Թալեաթ փաշայի թողած փաստաթղթերը» խորագրով կրող գրքի ձեւով, տարակարծութեան մշուշը չցրուեց: Գրքի նախաբանում հեղինակը մօտաւորապէս կրկնում է այն, ինչ արդէն ասել է 2005 թ.-ին՝ հայերի դաւաճանութեան, պատերազմական իրադրութեան, պետութեան ինքնապաշտպանութեան իրաւականութեան, ունիոնիստների հերոսականութեան եւ այլնի մասին: Այն տարբերութեամբ, որ այս անգամ նա հրապարակում է փաստաթղթերի բնագրերի պատճէնները: Բնագրեր, որոնք, սակայն, բոլորովին այլ բան են ասում:

Ա. Թ. - Ըստ Ձեզ՝ փաստաթղթերը վաւերակա՞ն են:

Դ. Թ. - Կ'ասէի, որ բովանդակութիւնը նրանց անխաթարութեան հանդէպ կասկած չի յարուցում: Ընդ որում, պատմաբաններ Ֆուաթ Դիւնդարն ու Թաներ Աքչամը այդ փաստաթղթերը վստահելի համարելու եւ նոյնիսկ որպէս սկզբնաղբեր ոգտագործելու համար բնօրինակների հրապարակմանը չեն էլ սպասել: Ֆուաթ Դիւնդարը նկատել տալով, որ Բարդակչին ներ-

կայացրած փաստաթղթերի տուեալները համընկնում են այլ սկզբնաղբերներում տեղ գտած տուեալներին, եզրակացնում է, որ էզաթ Ուրասի ուսումնասիրութիւնները ու վարչապետի թղթածրարների հաշուարկների հրապարակումներից յետոյ դրանք «հայկական հարցի կարեւորագոյն վկայագրերն են»: Թաներ Աքչամն իր աշխատութիւնում տեղահանուած հայերի թիւը ճշգրտելիս յենում է հենց Բարդակչիի հրապարակած նիւթերի վրայ: Վերջապէս Արա Սարաֆեանը, ով ձեռնարկել է խնդրոյ առարկայ որոշ վաւերագրերի վերլուծումը, դրանք համարում է «անվիճարկելի»՝ ընդունելով հանդերձ, որ թուրք լրագրողը «աղաւաղումներ ու կեղծումներ թոյլ տուել է»:

Հենց թէկուզ երկար ժամանակ թաքցուած լինելու հանգամանքը, ըստ իս, դրդում են հաւատ ընծայել վկայագրերին՝ ներկայացնող տուեալները նախատեսուած են եղել նեղ շրջանակի՝ գործնական ու «ժողովրդագրական» կարիքների համար, այսինքն՝ քարոզչական նպատակ չեն հետամտել: Միւս կողմից էլ, այս վաւերագրերը ճիշտ տեղին լրացնում են օսմանեան թղթածրարներում առկայ բացը: Խնդիրն այն է, որ հայերի տեղահանութեամբ զբաղող հետազոտողները Թալեաթ փաշայի թղթածրարներում հանդիպում են Ստամպուլից նահանգները յղուած բազմաթիւ հեռագրեր, որոնցով տեղի պատասխանատուներից նա պարբերաբար գեկուցազրեր էր պահանջում տեղահանութեան վերաբերեալ:

Այս հեռագրերի պատասխանները պէտք է, որ պահպանուած լինէին Ընդհանուր ապահովութեան նսօրինութեան թղթածրարներում: Սակայն այդ հաստատութիւնում նման բովանդակութեամբ ոչ մի վաւերաթուղթ չկայ, մինչդեռ Մուրադ Բարդակչիի հրապարակած նիւթերը ճշգրտօրէն համապատասխանում են Թալեաթի պահանջած տեղեկատուութիւններին: Այնուամենայնիւ, ես միանում եմ պրն. Սարաֆեանի վարկածին. շատ հաւանական է, որ այս հեռագրերը գրաքննուել, անգամ աղաւաղուել են: Առաջին «գտումը» կարող էր կատարած լինել վաւերագրերը տրամադրած անձը՝ Թալեաթ փաշայի այրու թոռնուհին, Այսեգյուլ Բաֆրալին: Ինքը՝ Բարդակչին էլ է յիշում, որ երբ նոթատետրն իրեն են յանձնել, չորս էջ բացակայել է: Որոշ վաւերագրեր լրագրողն ինքն է մասնակիորէն հրապարակել, սեփական ընտրութեամբ երկար գեկուցազրերի միայն առաջին մասն է ներկայացրել՝ նախաւորութիւն չտալով ամբողջական վերլուծման: Աւելին, ըստ էութեան ոչ մի պատմաբան ուղղակի չի առնչուել բնագրերին: Բարդակչին յայտարարել էր, որ իր տրամադրութեան տակ եղած նիւթերը յանձնելու է ռազմական թանգարանին, որպէսզի հետազոտողների տրամադրութեան տակ լինեն: Այդ բանը տեղի չի ունեցել: Կ'ամ իշխանութիւններն են արգելափակել, կ'ամ Բարդակչին, որը յայտնի է որպէս «թղթածրարների հաւաքամուլ»՝ նախընտրել է իրեն պահել, թերեւս 2015 թ.-ի՝ հերթական հրապարակման համար: Ա. Թ. - Ընդհանրական ի՞նչ բովանդակութիւն ունի նոթատետրը: **Դ. Թ.** - Նոթատետրի բովանդակութիւնն, ըստ էութեան, Առաջին աշխարհամարտի ընթացքում «Միութիւն եւ առաջադիմութիւն»



կոմիտէի իրականացրած ժողովրդագրական գործառույթների հանրագումարն է. նրա էջերում ճշգրտօրէն ու հանգամանօրէն ներկայացուած են ոչ միայն հայերի բռնագաղթի, այլեւ յոյների՝ Անատոլիայի խորքերը պարտադրուած տեղաշարժի, Միւրիայից տեղահանուած արաբ ընտանիքների, ռուսների բռնագրաւման հետեւանքով Արեւելքից փախած գաղթականների եւ այլ շարժւթթացներ:

Նոթատետրի 58 էջերից 18-ը ուղղակի առնչում են հայերին: Խօսքը բռնագաղթածների քանակի, տարահանուած շրջանների քարտէզի, հայերի վերաբնակեցման, որբերի թուի, ըստ նահանգների դատարկ տների, «գաղթականների» տեղաւորման համար ծախսուած գումարի, տրամադրուած հողերի, լքուած ագարակների փոխհատուցման մասին է: Նոթատետրը, սակայն, Մուրադ Բարդակչիի՝ 2008 թ.-ին հրատարակած գրքի առաջին մասն է միայն: Հանգամանքը, որ այն աղմկահարույց կերպով կոչուել է «սեւ» նոթատետր, անպէտքէն՝ «black book», իր վրայ առանձնապատուկ ուշադրութիւն է հրաւիրել: Մինչդեռ գրքի երկրորդ մասը, որը կազմուած է Թալեաթի այրու 1982 թ.-ին տրամադրած տարբեր փաստաթղթերից, տեղեկատուութեան առումով անհամեմատ հարուստ է: Այն ամբողջութեամբ առնչում է հայերին, իր 36 էջերում թերեւս աւելի կարեւոր, բացառապէս փաստաթղթեր է պարունակում, քան յիշատակուած նոթատետրը: Բարդակչիի գրքում յաջորդաբար տեղ են գտել Թալեաթի՝ 1915 թ.-ի Ապրիլի 25-ին նահանգների կառավարիչներին յղած հեռագրերը, «1915 թ.-ի տեղահանութեան սահմանակարգի» տեքստը, տարբեր ունիոնիստների հետ փոխանակած հեռագրերը, Առաջին աշխարհամարտից անմիջապէս յետոյ աքսորավայրից կնոջն ուղարկած բացիկները, կառավարական ծրագրի աշխատակազմի նախագծի նշումները, որոնք գտնուել են անձնական թղթերի մէջ: Բարդակչին քննարկուող գրքում հրապարակել է նաեւ Թալեաթ փաշայի այրու հետ մահուանից (1982 թ.-ի Հոկտեմբեր) քիչ առաջ ունեցած հարցազրույցի վերծանումը: Վերջապէս գիրքն ամբողջանում է բազմաբնոյթ լուսանկարներով:

Ա. Թ. - Թալեաթը նման նոթատետր պահելու ի՞նչ շահագրգռուել է ունեցել: Ինչի՞ է այն ծառայել: Նոթատետրը փաշայի հոգեբանութեան բացայայտումների յանգեցնում է:

Դ. Թ. - Վիճակագրական այդ հաշուարկները, գծագրերը, քար-

ՌՈՊԸՐԹ ՖԻՍՔ ՊԵՅՐՈՒԹԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԶԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԽՕՍԵՑԱԲ ԶԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՄԱՍԻՆ



Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով ելոյթ ունեցաւ անգլիացի հանրաճանաչ լրագրող Ռոպըրթ Ֆիսքը՝ Պէյքրութի ամերիկեան համալսարանի «Իսամ Ֆարես» սրահին մէջ, Հինգշաբթի, 26 Մարտ երեկոյեան ժամը 7:30-ին, կազմակերպութեամբ Լիբանանեան հայկական աւանդներու ակումբին:

Ձեռնարկը սկսաւ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներով:

Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Խաթակ Կէօքճեան: Ան ըսաւ, որ ամէն ազգ եւ իւրաքանչիւր անհատ պարտաւոր է պահանջել իր ընկերոջ ապրելու իրաւունքը: Ան նշեց, որ Հայոց Ցեղասպանութիւնը քաղաքակրթութեան եւ մարդկութեան դէմ ոճրագործութիւն էր. 6000 տարուան կեանք ունեցող ազգի ու մշակոյթի դէմ:

Կէօքճեան նշեց նաեւ, որ թրքական կառավարութեան կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը կրնայ բարեկամական խաղաղ յարաբերութիւններու տանիլ Հայաստանն ու Թուրքիան: Ան ըսաւ, որ կը հաւատայ, թէ արդարութիւնը պիտի հաստատուի եւ հայերը պիտի պահանջեն ճանաչում ու հատուցում: Խօսքի աւարտին ան ներկայացուց բանախօս Ռոպըրթ Ֆիսքը, որ անգլիական «Տի Ինտիփենտընթ» թերթի խմբագիր է, արժանացած է միջազգային բազմաթիւ լրագրական մրցանակներու:

Ռոպըրթ Ֆիսք
Ելոյթ ունեցաւ լրագրող Ռոպըրթ Ֆիսք: Ան դիտել տուաւ,

թէ ինչպէ՛ս հայոց կոտորածը 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնն էր՝ նշելով, որ գերմանացի զինուորներ թրքական բանակին մէջ ականատես եղած են այդ իրադարձութիւններուն, որոնց վկայութիւնները անչափ կարեւոր են հայութեան համար: Ֆիսք ընդգծեց նաեւ, որ իր շատ ընկերներու հայրերն ու մայրերը նոյնպէս ականատես եղած են եւ վերապրած են ցեղասպանութիւնը: Ան նկատել տուաւ, որ ոչ միայն թրքական կառավարութիւնը կը վարէ ժխտողական քաղաքականութիւն, այլեւ ամբողջ Եւրոպան: Ան ներկաներուն ուշադրութեան յանձնեց, թէ ինչպէ՛ս անցեալին Ուինսթըն Չըրչիլ հայոց ողբերգութիւնը ցեղասպանութիւն կոչած է, սակայն տարիներ ետք Թոնի Պլեյր հրաժարած է ցեղասպանութիւն բառը օգտագործելէ:

Ֆիսք նշեց, որ նահատակները այսօր կ'ապրին, այնքան ատեն որ հայերը կը շարունակեն չիշել ցեղասպանութիւնը եւ պատմել կատարուածին մասին: Անոնք իրապէս կը նահատակուին, երբ հայութիւնը ալ չիօսի անոնց մասին:

Ան ըսաւ, որ պէտք է այնպէս մօտենալ ցեղասպանութեան նիւթին, որ կարծես ան կատարուած ըլլայ երէկ: Ցեղասպանութեան փաստը պէտք է տանիլ հեռու անցեալ եւ դիտել անկէ, այլ սեպել, որ ան իրօք կատարուած է երէկ: Եթէ փորձենք ցեղասպանութեան նկարներուն նայիլ, իրապէս պիտի զգանք, որ անոնք թարմ են տակաւին մեր յիշողութեան մէջ, աւելցուց ան:

Ան բացայայտեց այն իրակա-

նութիւնը, որ հայ ազգը յաղթեց իր յիշողութիւնը պահելով:

Ապա հարց տուաւ, թէ ինչպէ՛ս պիտի ըլլայ հայութեան երկրորդ 100-ամեակը ցեղասպանութենէն ետք:

Ան ըսաւ, որ առաջին 100-ամեակին կարելի եղաւ վերապրողներու վկայութիւնները հաւաքել, պահել, սակայն երկրորդ 100-ամեակին վերապրողներու սերունդը արդէն գոյութիւն չ'ունենար, ուրեմն ի՞նչ պէտք է ընել:

Ան շեշտը դրաւ Ցեղասպանութեան վերբերեալ ուսումնասիրութիւններ կատարելու աշխատանքի անհրաժեշտութեան ու կարեւորութեան վրայ: Ուսումնասիրել պատմութիւնը ոչ իբրեւ նահատակի եւ զոհի հոգեբանութեամբ, այլ՝ յաղթողի:

Ֆիսք նշեց, որ ցեղասպանութիւնը ճանչցած են հարիւրաւոր միջազգային գիտնականներու շարքին նաեւ բազմաթիւ հրեայ պատմաբաններ եւ եւրոպական պետութիւններ: Ան անդրադարձաւ, որ Թուրքիա կը հետապնդէ Ապրիլ 24-ը Կալիփոլիի ճակատամարտի յիշատակման օր յայտարարել, եւ նշեց, որ անցեալին կը հերքէր, որ հայ զինուորներ մասնակցած են ճակատամարտին, ինչպէս օրինակ՝ զօրավար Սարգիս Թորոսեան, որ լուսանկարուած է օսմանեան ռազմական զինուորագետով:

Ֆիսք պատմեց իր Թուրքիա կատարած այցելութիւններուն մասին: Պատմական Հայաստանը տեսնելու եւ գաւառները շրջելու կարելիութեան մասին: Ան նշեց նաեւ, թէ ինչպէ՛ս սեղանի մը շուրջ նստած թուրքերու հետ, երբ կը հարցնէ Հայոց Ցեղասպանութեան մասին, սեղանակիցները կը պատասխանեն, որ բոլոր թուրքերը գիտեն, թէ ինչ տեղի ունեցած է: Սովորական մարդիկ գիտեն, պետութիւնն է, որ չի ճանչնար: Ան վկայութիւններ կարդաց

հայութեան մասին, վերապրողներէն: Ապա ցուցադրեց հայոց արհաւիրքի մասին խօսող երեք լուսանկարներ՝ գերմանացի զինուորի մը կողմէ նկարահանուած: Ան շեշտեց նկարներու կարեւորութիւնը գիտական աշխատանքներու ընթացքին եւ ըսաւ, որ նկարները կենդանի վկայութիւններ են, որոնց վրայ պէտք է առաւել կեդրոնանալ, ուշադրութիւն դարձնել, վերլուծել: Ան ըսաւ, որ նկարները միակ արխիւներն են, որոնք կրնան վերարտադրել պատմութեան անցած ուղին: Նշեց, որ Ֆիսքի ցուցադրած լուսանկարները տրամադրուած էին Հայոց ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի տնօրէն Հայկ Դեմոյեանի կողմէ:

Ֆիսք նշեց, որ Հայոց Ցեղասպանութեան մասին թուրք ակադեմիականներու հետ զրուցելն ու կարծիքները փոխանակելը բաւարար չէ, այլ պէտք է բացայայտուիլ ու խօսակցիլ սովորական մարդոց հետ: Ան յայտնեց նաեւ, թէ ինչպէ՛ս փոքրիկի մը աչքին առջեւ երկու քուրբը կ'առեւանգեն, իսկ մայրը կը մեռցնեն, իսկ տղան 11 տարեկանին կը կորսնցնէ իր աչքի լոյսը: Կեանքը կ'ապրի վրէժով լեցուն ու ատելութեամբ, սակայն ի վերջոյ կը յաջողի իրմէ վանել ատելութեան զգացողութիւնը:

Աւարտին Ռոպըրթ Ֆիսք պատասխանեց ներկաներու հարցումներուն: Իսկ աւարտին բոլոր ներկաները ոտքի կանգնած երկար ծափահարեցին երախտագիտական ու շնորհակալական ծափահարութիւններ:

Ապա Պէյքրութի Ամերիկեան Համալսարանի դասախօս դոկտ. Ժան Կէօքճեան շնորհակալութիւն յայտնեց Ռոպըրթ Ֆիսքին օգտաշատ ելոյթին առիթով, որ այնքան ջերմ ու հարազատ էր: Ան գնահատեց լրագրողը հայոց պատմութեան չբացայայտուած էջերը լոյսին բերելուն համար:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԷՍՏ ԿԱԹՈՂԻԿԷ ԱԹՈՒԱՆԻՍՍ ԵՎԵՂԵՏԻ
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHOLIC CATHEDRAL

Կազմակերպութեամբ՝
Կլեմէնտիյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Աթոռանիստ
եկեղեցւոյ մշակութային յանձնախումբին

**ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
100-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ**

Հովանաւորութեամբ՝
Արհի. ՄԻՔԱՅԷԼ Եպս. ՄՈՒՐԱՏԵԱՆԻ
(Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Կաթողիկէ Հայոց)

ԳԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՑ
Բանախօս՝ ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ
Նիւր՝ «ՆԱՀԱՏԱԿ ԳՐՈՂՆԵՐ»

Հանդիսավարուի՛ «Բարեւ» հեռատեսիլի կայանի տնօրէնուի
ՆՈՒՆԷ ԱԻԵՏԻՍԵԱՆ

Գեղարուեստական ճոխ յայտագիր
Ռոբբաթ, 17 Ապրիլ 2015, երեկոյեան ժամը 7:30ին,
եկեղեցւոյ «Թէյմոն եւ Անի Գոյութեան» սրահին մէջ
1510 East Mountain Street, Glendale, CA 91207

Հիւրասիրտութիւն

**OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA**

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Դետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆՈՒՄԻ ԴԵՍՊՈՒՆ ՌԵՆՐԻ ՍՈՐՂՆԹՈՒՄՅԱՆ ԶՈՒՇԵՐԸ ԹՈՒՐԹԻԱ-ԿՈՆՍՏԱՆՍՆՈՊՈԼՍՈՅ ՄԵՋ ՊԱՇՏՕՆԱԿԱՐԱԾ ԱՏԵՆ 1913-1916 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ

ՊՈՂՈՍ ԱՐՄԵՆԱԿԼԱԳԻՍԵԱՆ

Հայոց ցեղասպանության ժամանակահատվածին հարկերում համարվող ռեզերվների գրքի պատմագիրը: «Դեսպան Սորղնթոմյանի Պատմությունը» գիրքը հրատարակվել է 1918 թվականին: Դեսպանի լուսնային պատմագիրը շարադրելու էմ, պահպանելով նրա հաղորդումների վաղապահությունը եւ նաեւ իմ անձնական մտածումները:

Ներկայացնում եմ համապատասխան վերջին տարիների համառոտ կենսագրությունը: Հենրի Սորղնթոմյանը ծնունդ է առել 1856 թվականի Ապրիլի 26-ին, Գերմանիա, Հրեայի ծագումով ընտանիքում: Փոքր տղայ է եղել, երբ նրա ընտանիքը Գերմանիայից գաղթել է Ամերիկայի Միացեալ Նահանգներ: Հասուն տարիքին ԱՄՆ-ի քաղաքացիություն է ընդունել:

Իրաւաբանական կրթութիւն ստանալուց յետոյ, Հ. Սորղնթոմյան պաշտօնավարել է «Նիւ Եորք»-ում: Անշարժ գոյքի առուծախի գործունեութեամբ կուտակել է նշանակալի հարստութիւն: Որպէս Դեմոկրատական Կուսակցութեան» գործադիր հանդիսացած հարուստ վերնախաւի անձնաւորութիւն, Հ. Սորղնթոմյան, 1912 թ. եղել է նրա ֆինանսական ատենակցութեան: 1916 թվականի եւ յաջորդ շրջանի ընտրապայքարներին, նաեւ եղել է ատենակցութեան Վոլտեր Վիլսոնի նախագահական երկու յաղթական ընտրական արշաւներին:

Նախագահ Վ. Վիլսոնը, 1913 թվականին Հ. Սորղնթոմյանին նշանակել է Թուրքիայում դեսպանի պաշտօնին: Կոնստանտինոպոլսում պաշտօնավարել է մինչեւ 1916 թվականը: 1915 թվականին, Թուրքիայում ազգայնականության ծագման վաղ շրջանին կատարուած Հայկական կոտորածների մասին ստացած տեղեկագրերը անձկութիւն էին պատճառել իրեն: Եղեռնական դէպքերին միջամտելու խնդրագրերն էր բազմիցս դիմել է Ամերիկեան կառավարութեանը, սակայն յաջողութեան չի հասել:

Հ. Սորղնթոմյան կոչ է ուղղել Օսմանեան կառավարութեան Ներքին Գործերի նախարար Թալատին եւ զերմաստանական զինուորական ղեկավարներին, երկուսն էլ դադարեցնելու հայերի կոտորածները, նման կոչերը նույնպէս սպարդիւն էին եղել: Ի վերջոյ նա հրապարակել է իրեն հասու եղած տեղեկագրերի բովանդակութիւնը համաշխարհային լրատուական շրջանակներին:

Հ. Սորղնթոմյան, 1918 թվականին իր լուսնային «Դեսպան Սորղնթոմյանի Պատմությունը» գրքում հրատարակել է Թուրքիայում եղած ատեն իրեն յայտնի տեղեկագրերի ու այլ հրապարակումների տեղեկութիւնները, ընդգծելով իր վաղ կարծիքը Հայկական կոտորածների մասին: Հայերի մասին իր գրքի շարադրանքը վերնագրել էր «Մի ազգի սպանությունը» խօսքով:

Հ. Սորղնթոմյան, 1919 թվականին մասնակցել է «Փարիզի Խաղաղութեան Համաժողով»-ին, որպէս Միջին Արեւելքի եւ Եւրոպական գործերի մասնագետ: Համաժողովի ընթացքում, ջանացել է աշխարհում հաստատել տեսական խա-

ղաղութեան պայմաններ: Նա, յետպատերազմեան շրջանին, իր անձնական դերակատարութեամբ, առաջարկել է Արեւելեան Եւրոպայի երկրների օգնութեան հիմնադրամներ, ծառայել է որպէս ատենակցութեան «Ազգերի Լիգայի» պաշտպանութիւնը վայելող՝ «Յունական Գաղթականների Հաստատութեան Յանձնաժողովի»:

Հ. Սորղնթոմյան Աւագի հայրը, ծառայել է «Ելեւմտից (Ֆինանսներ) Քարտուղար» Ֆրանկլին Դ. Ռուզվելտի վարչախմբում: Հ. Սորղնթոմյան հրատարակել է ինքնակենսագրական ընդլիկ երկու հատորներ եւս՝ «Ամբողջ Մի Կեանքի Ընթացքում» (1922) եւ «Գործողութեան էի Աթէնք» (1922):

Հենրի Սորղնթոմյան մահացել է 1946 թ. Նոյեմբեր ամսին, իննսուն տարեկանին, ողնաշարի արիւնհոսութիւնից:

Հ. Սորղնթոմյանի լուսնային շարադրում եմ ներքոյիշեալ եւ այլ հատուածներ:

ՎԱՆԻ «ՅԵՆԱՓՈՈՒՅԻՆԸ»

Վան, Վանայ նահանգ-վիլայէթ, տեղանշուած էր Արմինա-Հայաստանի Հայկական Լեռնաշխարհի Արեւմտեան կողմում: Այն սահմանակից էր Պարսիքի եւ հարակից Կովկասի երկրներին: Վասպուրականի Հայկական թագաւորութեան մայր ոստանն էր: Գեղեցիկ է նահանգը, անուշ է արարչական Հայկական Լեռնաշխարհը, Արմին-հայերի հազար-հազար տարիների Բիրահն-նախարարական տներ, արեւելքի բարերի-արքայ Մեծն Տիգրանի ոստան հրաշակերտ Տիգրանակերտ, հողն է բերրի, Արմին-հայերի լեցուն արարումներ, բարգաւաճում, առատութիւն ու լոյս էր այնտեղ: Առաջին մարդոց ծննդավայր Եղեմն էր այնտեղ: Վան քաղաքը՝ համանուն նահանգի գլխաւոր քաղաքն էր, փռուած Վանայ-Քզնունեանց ծովի ափերին: Նրան իրենց ափերի վրայ են պահել հազար-հազար դարեր առաջ իրենց գագաթներից հուր ժայթքած Վարագ, Թոնտուրեկ, Արտոս, Սիփան, Նեմրութ լեռները: Նրանց կրակ լոյսն էր լցուել ծովին, վառուել էին ջրերը, աստուածների երկունք էր եղել այնտեղ: Ծովի ջրերից յառնած ժայռաբլուրին՝ աշխարհին Արմին-Հայ ցեղի հանճար լոյսը վառող Ախթամարի վեհաշուք տաճարն է կանգնած, առանց իր գագաթին ... Խաչի: Վան քաղաքը, Արմին Հայերի Շիւհին արեւ աստուծոյ կին՝ Տուշպա կոչուել: Այն կառուցուել է Արմինա-Ուրարտու Արարտունիների Արա-Արայան գահատոհմի Նախի-Բիա-ինիլի երկրի արքայ՝ Սարգուրի Ա. կողմից: Չքնաղ է եղել Տուշպան, նրան հսկում էր բարձր սեպաձեւ ժայռի վրայ բազմած անհասելի միջնաբերդը, շրջապատուած քարաշէն պարիսպով, որի պատերին դեռեւս ընթեռնելի է Սարգուրի արքայի բազմատող արձանագրութիւնը:

Վան քաղաքը Թուրքիայի բռնազաւթած փոքր ասիական մասի միակ քաղաքն էր, որտեղ Հայ ազգաբնակչութիւնը աւելի էր քան իսլամ բնակչութիւնը: Առաջին Համաշխարհային պատերազմի



վաղորդականին, նրա երեսուն հազար Հայ բնակիչները ամենախաղաղ, ամենաերջանիկ, ամենաբարգաւաճն էին, հակառակ նրան, որ հայերով բնակուած այլ վայրերում, ինչպէս նաեւ Վանում, տեղի էին ունեցել ջարդերի ու կեղեքումների ժամանակներ: Նուաճող Թուրքի լուծը Վանում նուազ ծանր էր եղել, շնորհիւ Վանի լուսամիտ կառավարիչ՝ Թահսին փաշայի: Նրա պաշտօնավարութեան ատեն հաշտ ու համերաշխ յարաբերութիւններ էին հայերի ու իսլամ բնակչութեան միջեւ:

Վանի նահանգը իր աշխարհագրական դիրքով ուզումագիտական կարեւոր կեդրոն էր: Նրա Հայ բնակչութեան նկատմամբ կառավարութիւնը կասկածանք էր տածում: Ենթադրել էին, եթէ Ռուսիա Թուրքիա արշաւէր, իրենց երթի յարմարագոյն ճամբան այդ նահանգով պիտի անցնէր: 1914 թ. պատերազմի սկզբին, Վանում եւ այլուր, բանակի համար իրեղէններու բռնագրաւումներ էին կատարուել, որոնք աւելի դաժան էին քրիստոնեաների, քան իսլամների համար: Հայերը թողել էին, որ սպանելու տանէին իրենց ամբողջ ընտանի անասունները, պարէնը եւ ուրիշ ունեցուածքները, որոնց փոխարէնը ստանում էին անարժէք թղթադրամներ:

Բանակ զորակոչուած Հայ զինուորների նկատմամբ վայրագ վարուելակերպը, Թուրքերի տարածած ամբաստանութիւնները հայերի ու քրիստոնեաների դէմ, Կովկասի ճակատում նրանց կրած պարտութիւնների պատճառները հայերին վերագրելը, երկիւղ էին պատճառել մասնաւորապէս հայերին ու քաղաքի քրիստոնեաներին: Անդրկովկասում Ռուսական բանակի անձնակազմի մեծ մասը Հայ զինուորներից բաղկացած լինելը զայրացրել էր Թուրքին: Նրանք հաշուի չէին առել, որ հայերը ցարի հպատակներն էին հանդիսանում եւ նաեւ ուսուցիչ նման պարտաւոր էին զինուորագրուելու: Թուրքը ամբաստանում էր հայերին, որ իբր Վանայ եւ ուրիշ նահանգների զինապարտութեան ենթակայ անձանց մեծ մասը դասալիք էին եղել, հատել երկրի սահմանը, միացել Ռուս պետութեան բանակին, որը իբր պատճառ հանդիսասել Կովկասեան ուզումաճակատում կրած պարտութեան: Դեսպանը նման տեղեկութիւնը հաստատուած չի համարել, թէեւ անհաւանական չի գտել մի քանի հարիւր մարդկանց դասալքութիւնը: «Միութիւն եւ Յաւանալիցիութիւն» կոմիտէի գործակալները Վան ու հրգրում էին ժամանել, առաջարկել էին մի քանի հայեր Ռուսահայաստան գնալին եւ այնտեղ ցարի կառավարութեան դէմ ապստամբութիւն կազմակերպելին:

Հայերը մերժել էին նման առաջարկը: Թուրք կառավարութիւնը այդ «դաւաճանութիւն» է համարել եւ այն նաեւ չքմեղանք ներկայացրել Հայ ցեղի մարդկանց հանդէպ իրենց վերաբերմունքին: Այդ պատկերացում է «Օսմանեան նկարագրի վատթարութիւնը» գրում է Հ. Սորղնթոմյան:

Անցած երեսուն տարիներին հարիւր հազարաւորներով ջարդած, կողոպտած, խոշտանքած, նրանց կանանց ու աղջիկներին անպատուած, Թուրքը ցանկանում էր հայերի ամենակատարեալ «ուղղամտութիւն»-ը: Գաղտնիք չէր, որ հայերը համակիր էին պատերազմում «Համաձայնականներ»-ի կողմին: Պետական ոճիր էր համարուել Հայ զինուորի դասալքութիւնը, արժանի պատժուելու սարսափելի վարմունքներով: Իրենց տարագրութեան հրաման ստացած, Մուսա Լեւան բարձունքներին Թուրքի դէմ ճակատամարտած կուռղ մարդկանցից շատեր թրքական զորանոցներից փախած դասալիք զինուորներ էին:

1914 թվականին, մասնաւորապէս 1915-ի սկզբին Վանում ու այլուր ծանր հալածանքների դէպքեր էին պատահել, հայերը գապել էին իրենց: Թուրքերի քաղաքականութիւնն էր հայերի ապստամբութիւնը զրգուելու, որ այն դառնար իրենց կատարած կոտորածների չքմեղացուցիչ պատրուակ: Հայ կղերք ու քաղաքական առաջնորդները ժողովուրդին հանդարտութեան էին կոչել, յանձնարարել հանդուրժել ծայրայեղ արարքները, չտրամադրել Թուրքին այն առիթը, որ նրանք ցանկանում էին: Եթէ նույնիսկ գաւառի գիւղերից մի քանիսը կրակի տային, վրէժի չզրիմէին, աւելի լաւ էին համարել շէնքերի փոքր թիւ մը քանդուէր, քան ամբողջ ազգը սպանուէր: Ոչ, գէնքով, նաեւ նրանց շէնքերը այրելով վրէժ պիտի լուծէին, որ յետոյ ամբողջ ազգը չսպանուէր:

Պոլսոյ կառավարական դաս-լիճի անօրէն մարդիկ, եթէ կարելի է նրանց «մարդ» անուանել, պաշտօնանկ էին արել Վանի կառավարիչ Թահսին փաշան, նրա փոխարէն նշանակել էնվերի քեռայր՝ ձեւտեթ պէյը (քրոջ ամուսին): Մտահոգիչ կարգադրութիւն էր այդ: Երկրի պաշտօնական ներկայացուցիչներում պատահել էր մարդկանց մի փոքրամասնութիւն, որոնք ընդիմացել էին, որ սպանութիւնը պետական քաղաքականութիւն լինէր: Մերժել էին գործադրել պետական արիւնուշտ հրամանները:

ԿԵՂՈՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ (ԿԲՎ) ՇՐՋԱՆԱԼԱՐՄԻՑ ՄԻՈՒԹԻԻՆԸ 25 ՏԱՐԵԿԱՆ Է



25 տարի քրքրած աշխատասեր երիտասարդ է Կեղրոնական Բարձրագույն Վարժարանի Շրջանաւարտից Միութիւնը: 25 տարուան հետեւողական աշխատանքով անունը առած ու աճած է եւ դարձած է բոլոր ժամանակներու հայ աշակերտները գրկաբաց ընդունող վարժարանին հարազատ նեցուկը:

1990-ին ամերիկաբնակ 11 շրջանաւարտներ վարժարանին մնացուն նեցուկ կանգնելու գաղափարը կը յղանան եւ կ'որոշեն անմիջապէս գործի լծուելով հիմնել Շրջանաւարտից Միութիւնը:

Որոշում տալը մեծ աշխատանքի մը առաջին քայլն է, որ սակայն խօսքի սահմաններու մէջ կը մնայ, եթէ անոր մղում չտայ ինքը՝ շօշափելի գործը: Այդպէս ալ եղած է. հայ ժողովուրդին, այսպէս ըստած Միւրաքի, երկրորդ հայրենիքին մէջ 1922 թուականին կառուցուած Կեղրոնական Բարձրագույն Վարժարանին նիւթական ու բարոյական օժանդակութեան ձեռք երկարեցին այս մեծ գաղութին մէջ հաստատուած հարազատ զաւակները վարժարանին:

Ուրբաթ, 27 Փետրուար 2015-ին Phoenicia ճաշարանին մէջ 260 ներկաներով նշուեցաւ Միութեան 25 ամեակը: Յատուկ հրաւերով Պէջրութէն ժամանած էր վարժարանի տնօրէնուհին՝ Տիկ. Մարալ Տէյրիմէնէան: Ներկայ էին նաեւ նախկին տնօրէններէն Արամ Պուղըրեան, ինչպէս նաեւ ուսուցիչներ՝ Հայկազ Չալեան եւ Անի Յակոբեան:

Օրուան հանդիսավար Մէյրի Գոնիալեանի բարեգալուստի խօսքէն ետք վեր. Պերճ Ճամպազեան, Արա Գուրուջեան եւ Բաֆֆի Քերպապեան երգեցին Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի քայլերգերը: Ապա, վեր. Կալվին Սաղըրեան առ Աստուած ուղղած իր խօսքով փառք տուաւ հայ դպրոց մը հիմնելու տեսիլքը ունեցող ԿԲՎ-ի հիմնադիրներուն համար, որոնց գերագոյն նպատակը եղած է հայրենիքէն հեռու օտար երկրի մը մէջ հայ մանուկին հայ լեզուն ջամբել, զինք Քրիստոսի ճշմարիտ ճամբան առաջնորդել եւ այդ ձեւով տիպար հայն ու քաղաքացի կերտել: Ան նաեւ փառք տուաւ, որ այս ափերուն վարժարանին հանդէպ երախտագէտ հայրերին երկրէն սրտի պարտքը կը համարեն վարժարանին աջակցիլն ու անոր յառաջդիմութեամբ խնդակցիլը:

Միութեան հիմնադիրներէն Գաբրիէլ Ալպարեան եւ Արա Գալ-

Ֆայնանցուցարարեցին կարճ տեսաերիզ մը, որուն ընդմէջէն ներկաները Գօգո Պալեանի ձայնով ականջալուր եւ ականատես եղան միութեան գործունէութեան եւ սիրով տարուած աշխատանքին, որ կարելի է բացատրել միայն, *We care for CHS* նշանաբանով:

Միութեան ատենապետ Վարուժ Չարիւրտեան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց հեռուէն ու մօտէն ներկայ գտնուող շրջանաւարտներուն, վարչականներուն, կազմակերպիչ յանձնախումբին, Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան գործադիր տնօրէն Լեւոն Ֆիլեանին եւ Ազգային Առաջնորդարանի վարժարաններու խնամակալ Մարմնի անդամ Մակի Սարգսուհին: Ապա, փոխանցեց, թէ վարժարանին նիւթական օժանդակութիւնը տարուէ տարի վերելք արձանագրած է եւ այժմ կը ծածկէ վարժարանի տարեկան պիւտձէին 15 առ հարիւրը: Պէտք է ընդգծել, որ 25 տարուան ընթացքին Ամերիկայի Շրջանաւարտից Միութեան նիւթական ներդրումը մէկ միլիոն տոլարի սահմանը անցած է արդէն: Միութեան գոյացուցած գումարին առիւծի բաժինը իբրեւ նուիրատուութիւն կը տրամադրուի 1953 թուականին շրջանաւարտ ձերի եւ տիկնոջ Փաթ Թրփէնճեաններուն կողմէ: Այս առիթով ատենապետը կարգապէս ներկաներուն ուղղուած թրփէնճեանին նամակը:

Հակիրճ խօսքով հանդէս եկաւ Լեւոն Ֆիլեան, որ ընդգծեց, թէ Աւետարանական առաքելութեան ծիրին մէջ կ'իյնայ նաեւ աւետարանական վարժարաններուն նիւթական օժանդակութեան ձեռք երկարելու կարելիութիւնը, որոնց շարքին է ԿԲՎ-ը:

«Չորրորդ անգամն է, որ ձեր մէջ կը գտնուիմ եւ արդէն բոլոր հարազատներ էք» բառերով սկսաւ իր խօսքը ԿԲՎ-ի տնօրէնուհին տիկ. Մարալ Տէյրիմէնէան, աւելցնելով որ վարժարանի մանկապարտէզի աշակերտներն անգամ ծանօթ են իրենցմէ մղոններ հեռու ապրող անձանց, բայց հոգատար եւ յուսատու Շրջանաւարտից Միութեան անդամներուն: Տիկ. Մարալ ցուցադրեց յատկապէս այս ձեռնարկին համար պատրաստուած եւ ԿԲՎ-ի բոլոր աշխատանքներուն օգտակար հանդիսացող ձան Սաղըրեանի ձայնով արձանագրուած տեսերիզ մը, որուն ընդմէջէն ներկաները ականատես եղան վարժարանի տարածքին կատարուած նորոգութիւններուն եւ նոր բաժին-

ներու շինարարական աշխատանքներուն, որոնց նիւթականը տրամադրուած է Շրջանաւարտից Միութեան կողմէ: Ներկայիս 328 աշակերտ պարփակող այս վարժարանի յաջողութիւններուն, դաստիարակութեան մասին շրջող խօսքերէն տիկ. Մարալ Լիբանանի երեք հայ հանրայայտ անձնաւորութիւններու համադրուած եւ հասարակաց միտքը վկայակոչեց, ըսելով՝ «Կրթուած, յարգալի, հասկցող աշակերտներ, որոնք կը վայելն սիրոյ միջոցը եւ կը մեծան հոգեւոր եւ ազգային դաստիարակութեամբ»:

Ան մեծ ուրախութեամբ թուեց աշակերտներուն ներդրողական եւ արտադպրոցական յաջողութիւնները, ինչպէս նաեւ ուսուցչական կազմին ներկայացուած վերադասարանական դասախօսութիւնները: Խօսքի աւարտին ներկայացուց վարժարանը բարելաւելու համար անհրաժեշտ ապագայ ծրագրերը, նշելով որ անոնց իրագործումը կը կարօտի նիւթականի:

Տիկ. Մարալ Տէյրիմէնէան յատուկ յուշանուէրներով պատուեց Գաբրիէլ Ալպարեանն ու Արա Գալֆայեանը, տարիներու իրենց անսակարկ աշխատանքին համար:

Ներկաները վայելեցին գեղարուեստական հիանալի պահ մը, երբ Չութակահար եւ սոփրանօ երգչուհի Լուսինէ Ֆիլըն (Ֆըլեյոն) մեներգեց «Je Veux Vivre» (Բոմիոյ եւ ձիւլիթ) եւ Alyabyev-ի «Solovey»-ը, դաշնակի ընկերակցութեամբ Միւրաքի Ջիրեքեանցի: Ապա, Չութակահար Լուսինէն հիանալի ձեւով նուագեց Վիվալտի «Ամառ»ը եւ Արա Գէորգեանի «Արցախը»:

Աւանդութեան վերածուած հաճելի սովորութիւն մըն է պատուել տարուան ուսուցիչը: Այս իմաստով, Յակոբ Տէր Կարապետեան ներկայացուց 2015 տարուան ուսուցիչը՝ Հայկազ Չալեանի կենսագրականը: Ան 1961-1973 եղած է ԿԲՎ-ի ուսուցիչ, ինչպէս նաեւ տնօրէնի օգնական: Ուսողութիւն եւ բնագիտութիւն դասաւանդած եւ աշակերտներէն սիրուած պրն. Չալեան եղած է հոգատար ընկեր մը բոլորին, որուն պատճառով մենք՝ բոլոր սերունդներու աշակերտները անքակտելի կապով մը միացած ենք մեր վարժարանին, ըսաւ ան: Ապա, Տէր Կարապետեան զինք պատուեց գնահատական անկեղծ խօսքերու յուշատախտակով մը:

Հայկազ Չալեան յուզումով շնորհակալութիւն յայտնեց իր աշակերտներուն եւ հոծ ներկայութեան եւ ըսաւ, որ երեսուն տարիներ ետք միայն կրցած է այցելել ԿԲՎ եւ տնօրէնուհիին հրաւերով բարեբախտութիւնը ունեցած է շրջանաւարտներու հանդէսին ներկայ գտնուելու: Խօսքը ուղղելով ձեռնարկին ներկայ գտնուող աշակերտներուն, ըսաւ. «Ապրի՛ք, տակալին լաւ աշակերտներ էք, հոս ներկայ էք, որովհետեւ կը հաւատաք ձեր սիրելի վարժարանի առաքելութեան»:

Երաժշտական դադարով ելոյթ ունեցաւ 1962-ի շրջանաւարտներէն Յակոբ Քիւլիլեան, որ ներկաներուն հրամցուց հայ դասական ու ժողովրդական երգերու փունջ մը, դաշնակի ընկերակցութեամբ՝ Ես-

թեր Ասիլեանի: Մէյրի Գոնիալեան ներկայացուց գիտութեան, մարդկութեան եւ հայութեան ծառայող տարուան շրջանաւարտ ձոն Թիթիգեանի բեղուն գործունէութեան կարելի եղած չափով հակիրճ կենսագրականը: Թիթիգեան 1963-ին ԿԲՎ-էն շրջանաւարտ ըլլալէ ետք հաստատուած է Միացեալ Նահանգներ, ուր 1972 USC համալսարանէն ստացած է Ելեկտրական ճարտարագիտութեան (Electrical Engineering) Մագիստրոսի (MS) աստիճանը: Ելեկտրագիտութեան տարբեր մարզերու մէջ կատարած իր գիւտերու կողքին, նշուեցաւ որ ան գիտարարն է նաեւ «Power transistor for the ARSR4-Radar system», որուն համար արժանացած է «Distinguished fellow of technology» տիտղոսին: Տիկ. Գոնիալեան նշեց, որ գիտական միտք ունենալն ու գիտութեան աշխարհին ծառայելը երբեք Թիթիգեանը հեռու էն պահած հայութեանէն: Ան մինչեւ այսօր հայ ժողովուրդի կարիքներուն գործնական նեցուկ կանգնող հայրդի մըն է: Ձոն Թիթիգեան պարգևատրուեցաւ Շրջանաւարտից Միութեան պատրաստած յատուկ յուշատախտակով:

Ապա, ձոն Թիթիգեան խօսք առնելով չիշեց իր ուսուցիչներէն Հայկազ Չալեանին, Բարսեղ Անանեանին, պրն. Թուրիկեանին անունները, որոնք խոր ազդեցութիւն ձգած էին իր վրայ: Ան տուաւ մեղուին իր փեթակին կապուած ըլլալու ու հեռանալէ ետք միշտ իր ստունը վերադառնալու օրինակը, ընդգծելով որ մենք հայերս ալ նոյնը պէտք է ընենք եւ մեր նիւթական ու բարոյական օժանդակութիւններով վերադառնանք մեր փեթակին՝ Հայաստանին ու հայութեան, այս պարագային նաեւ մեր վարժարանին:

Տեղի ունեցաւ անձայն աճուրդ մը, Լեւոն Թրափըլի տրամադրած Հայաստան երթ ու դարձի տոմսին համար:

Ուրախութեամբ կը նշենք, որ Հայկազ Չալեան, ձոն Թիթիգեան եւ Գաբրիէլ Ալպարեան վկայագրեր ստացան Քոնկրէսի անդամ Ատամ Շիֆէն, Գալիֆորնիոյ Օրէնսդիր ժողովի անդամներէն՝ Մայք Կաթոնի եւ Ատրին Նազարեանէն: Իսկ ԿԲՎ-ի ուսուցչակազմը իրենց սիրելի տնօրէնուհիին իրենց երախտագիտութիւնը յայտնելու համար, առանց ներկաներուն յայտարարելու, Մայքը Արամի «Արարատն ու Նոյան տապան» նուիրեցին:

Նշենք, որ այս առիթով գնահատական եւ շնորհաւորական նամակներ, Միութեան պատմական ու հարկ եղած տեղեկութիւններ բովանդակող գրքոյ մը բաժնուցաւ ներկաներուն: Ներկաները ստացան նաեւ Արա Ասիլեանի կողմէ տրամադրուած զաւթներ, որոնց վրայ արձանագրուած էր ԿԲՎ անունը:

Ճաշկերոյցի աւարտին վարչական անդամները, տնօրէնուհին եւ Տիգրան Սրապեան հատեցին 25 ամեակի կարկանդակը, որ տրամադրուած էր 1980-ի շրջանաւարտ Տիգրան Սրապեանին կողմէ: ԿԲՎ-Ի ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԼԱՐՄԻՑ ՄԻՈՒԹԻԻՆ

Նոր իրավիճակ ընդդիմադիր դաշտում

Շաբուևակուած էջ 2-էն

բռնարարքները Հայաստանում, ինչպէս յայտնի է, այսպէս ասած՝ իրական ընդդիմադիր գործունէութեան չափանիշներ կամ չափորոշիչներ են, եւ տարածուած է այն մտայնումը, որ եթէ իշխանութիւնները որեւէ ուժի հանրահալաք կամ գործունէութիւն նման կերպ չեն թիրախաւորում, ուրեմն այստեղ ինչ-որ բան կայ:

Իհարկէ, տարածուած է նաեւ մէկ այլ մտայնում, որ իշխանութիւնները կարող են նաեւ նման թիրախաւորումներով բարձրացնել իրենց համար ցանկալի ուժի ընդդիմադիր վարկանիշը: Սա, իհարկէ, իշխանութիւններին բաւական բարդ խաղերի հնարաւորութիւն է տալիս ներքաղաքական դաշտում:

Թէ ինչի հետ հասարակութիւնը գործ ունի յատկապէս այս դէպքում՝ շատ դժուար է ասել եւ երեւի թէ իմաստ էլ չկայ խորամուխ լինելու ու գուշակելու, թէ ի վերջոյ բռնարարքների յատկապէս որ մոտիւցիւսի հետ գործ ունենք:

Սակայն ինդիրն այն է, որ այսպիսով արձանագրուած է Հայաստանի ներքաղաքական, մասնաւորապէս՝ ընդդիմադիր դաշտում որոշակի նոր ստատուս քուուոյի ձեւաւորումը, որտեղ աւելի ու աւելի առաջատար դիրքերում է յայտնուած Հիմնադիր Խորհրդարանը: Ցանկանում են սա իշխանութիւնները, թէ պարզապէս նրանք փորձում են քրէական տարրերով կանխել իրենց համար անցանկալի այս ստատուս քուուոյի հաստատումը՝ այլ հարց է, սակայն ակնյայտ է, որ նման իրավիճակում առաջա-

նում է նաեւ միւս քաղաքական ուժերի դիրքորոշման եւ դիրքաւորման խնդիրը:

Ըստ էութեան երկակի այս վիճակը բաւականին բարդ հանգոյց է ձեւաւորում քաղաքական դաշտում: Միւս քաղաքական ուժերը, որոնք յաւակնում են հանդիսանալ հասարակական շահերի թիւ մէկ կամ առաջատար սպասարկող քաղաքական ուժը, ըստ էութեան բաւականին ուժեղ եւ աճող վարկանիշով մրցակից են ստանում՝ ի դէմս Հիմնադիր Խորհրդարանի: Այլ կերպ ասած՝ ընդդիմադիր դաշտում առկայ է աճող մրցակցութիւն, եւ սա մի իրողութիւն է, որն անկախ այս դաշտում գործող սուբեկտների ցանկութիւնից կամ նպատակներից՝ գոյութիւն ունի, եւ որը չնկատելը այդ սուբեկտներին չի ազատելու դրա առկայութեան հետեւանքներից:

Հետեւաբար այդ մրցակցութեան իրողութիւնը պէտք է ոչ թէ չնկատելու տալ, այլ արձանագրել առկայ նոր իրավիճակը եւ գտնել լուծումներ՝ ելնելով հանրային, ոչ թէ կուսակցական շահերից: Սա ըստ էութեան Փետրուարից յետոյ ստեղծուած նոր իրավիճակի նոր մարտահրաւէրն է, որն աւելի է խորանալու եւ լրջանալու, եթէ ընդդիմադիր դաշտում գործող կամ յայտ ներկայացրած սուբեկտները արագ չարձագանքեն եւ չձեռնարկեն կանխարգելիչ կամ, այսպէս ասած, մրցակցային իրավիճակը կարգաւորող եւ այդ մրցակցութիւնը պարզապէս հասարակական, ոչ թէ իշխող համակարգի շահերին համապատասխանեցնող քայլեր:

«ԺԱՄԱՆԱԿ»

ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻ «ՍԵՒ» ՆՈՒԱՏԵՏՐԸ

Շաբուևակուած էջ 14-էն

տէգները, բացի տեղիատուութիւններից, մի անձնաւորութիւն են ի յայտ բերում, որը շատ է տարբերում կնոջը սիրային նամակներ, մտերիմներին սրտառու խոստովանութիւններ յղողից, ինչպիսին ուզում է ներկայացնել Մուրադ Բարդակչին: Այս ա՛յլ անձնաւորութիւնը, ա՛յլ թալեաթը յամառօրէն, գրեթէ հետեւողականօրէն հաշուարկում է տարաբարուած, վերապրած, անհետ կորած հայերի թիւը, նրանց տնեւրը, ազարակները, թանկարժէք գարգերը, այգիները, դաշտերը, մրգատու ծառերը, որբերին, որ տարագիրները թողնում էին իրենց ետեւում: Վաւերաթղթերն ամբողջութեան մէջ միայն մի՛ բան են ասում՝ թալեաթ փաշան գիտէր, որ հայերին գրեթէ անխուսափելի մահուան է ուղարկում, քանի որ թուաքանակի էր վերածում մահը: Նրա նոթատետրը, ինչպէս նաեւ Մուրադ Բարդակչիի հրապարակած միւս վաւերագրերը, բացայայտում են թալեաթի, աւելի լայն ընդգրկումով ունիտիստների նպատակամէտ՝ կշռա-

դատուած, կանոնակարգուած մտածելակերպը: Նման մտածելակերպն էր, որ յանգեցրեց կայսրութեան հայերի նուազեցմանը՝ աւելացնելու համար թուրքերի, եթէ անգամ թուրք էլ չէին, թրքանալու դատապարտուածների թուաքանակը: Հայերի բռնագաղթեցման, «վերաբնակեցման» տարածքները որոշակիացնող քարտէզները հաւաստում են այդ մտայնութիւնը՝ թալեաթը գծում էր թուրքական ու մահմեդական, միատարր, միաձուլ, ծագումնաբանական բազմազանութիւնից ձերբազատուած թուրքեր: Ի վերջոյ, Մուրադ Բարդակչին, միեւնոյն գրքում հրապարակելով այս վաւերաթղթերն ու թալեաթի «մարդկային» սիրային ու ընկերային մտերմիկ նամակները, սոսկ հաւաստում է, որ միաժամանակ կարելի է դահիճ ու գործվայոյց ամուսին լինել: Հանգամանք, որը հաստատում է այն, ինչը ցեղասպանագէտները բացայայտել են՝ ոճրի պատասխանատուները հոգեզարներ, հրէշներ չէին, սովորական մարդիկ էին:

(Շաբուևակեթի)

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՀՁՕՐ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Շաբուևակուած էջ 8-էն

դացած են դիմադրաւել ամէն տեսակի տագնապներ, նեղութիւններ եւ դժուարութիւններ:

Քրիստոսի Յարութիւնը նաեւ կուզայ պատգամելու մեզի, թէ վերջին յաղթանակը միշտ արդարութեանն է ընդդէմ անարդարութեան, բարիինն է ընդդէմ չարին, կեանքինն է ընդդէմ մահուան:

Իր հաւաքական կեանքը Քրիստոսի կառքին լծող հայ ժողովուրդը փորձառաբար իրագեկ է այս ճշմարտութեան: Հակառակ անոր որ մեր բազմադարեան պատմութեան մէջ հայ ազգը արձանագրէր է բազմաթիւ մահասարսուռ էջեր, սրտաճմիրիկ հաստակութիւններ եւ ազգային մեծ աղէտներ՝ Յարութեան յեղաշրջիչ զօրութեամբ ազգովին կրցած ենք մեր արցունքէն ծիածան եւ մեր փուշերէն պսակ շինել: Ասոր պերճախօս օրինակը 1915 էն 1923 տարիներու ընթացքին Օսմանեան Թուրքիոյ կողմէ գործադրուած Հայոց Ցեղասպանութիւնն է, որուն հարիւրամեայ տարելիցն է որ աշխարհասփիւռ հայութիւնը կ'ոգեկոչէ այս տարի: Ի հեճուկս այն իրողութեան, որ այդ դժուրակ տարիներուն հայ ժողովուրդը իր խաչը կրած՝ քայլեց դէպի իր «Գողգոթա»ն, քայլեց արեան ճանապարհէն, արցունքի

հովիտէն եւ մահուան մութ ձորէն, Աստուածատուր յարութեան զօրութեամբ ոտքի կանգնեցաւ իր Մայր հողին վրայ պետականութիւն կերտեց՝ հիմը դնելով մեր այսօրուան սիրելի Հայրենիքին: Իսկ Ցեղասպանութենէ մազապուրծ ազատած «Մնացորդաց»ը՝ Մերձաւոր Արեւելքի երկիրներու եւ համայն աշխարհի տարածքին մէջ նորանոր գաղութներ կազմակերպեց:

Եգեկիւել մարգարէի չորցած ոսկորներու յարութեան տեսիլքը լիովին կը շարմարի Ցեղասպանութենէն վերապրող հայ ազգին: Չորցած ոսկորներէն յառնող, փրկելի պէս մոխիրներէն ծնող շուրջ տասը միլիոն հայեր այսօր կը յայտարարեն աշխարհի, կանք, կը մնանք, կ'ապրինք, կը ստեղծագործենք եւ արդարութիւն կը պահանջենք:

Թող Ձատկուայ հրաշքը իր ներգոր ազդեցութիւնը ունենայ ամէն հայու եւ ամէն մարդու կեանքին մէջ, որպէս զի կարենայ լիաթոք գոչել, «Քրիստոս յարեալ ի մեռելոց, օրհնեալ է յարութիւնս Քրիստոսի»:

ՎԵՐ. ԴՈՒՑ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ
Գործադիր Տնօրէն՝
Հայ Աւետարանական
Համաշխարհային Խորհուրդի

ԲԱՐՈՒ ԵՒ ՍԻՐՈՅ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Շաբուևակուած էջ 13-էն

անցնում այն ազգակործան թուականից, որ մի ամբողջ անմեղ ժողովուրդ իր իսկ բնօրրանում սրի ու հրի քաշուեց եւ երկիրը բռնագրաւուեց, մի ծաղկուն երկիր՝ գետերով, լիճերով, արգաւանդ դաշտերով, ծաղկավառ սարերով եւ յիշատակներով լի:

Ցեղասպանութեան յիստն ամեակից ի վեր առաւել կազմակերպ-

ուած մեր աւանդական կուսակցութիւնները յետոյ Հայաստանը միացած աշխատանք է տարուած, որ թուրքիան իր ժխտողական քաղաքականութիւնից հրաժարուի եւ հաշտուի իր պատմութեան հետ, ընդունի ցեղասպանութիւնը եւ հաստատու տայ: Արդար պահանջատիրութիւնը անժամանցելի է, հայ ժողովուրդը անտեղիտալիօրէն շարունակելու է իր պայքարը մինչեւ արդարութեան վերականգնում:

ՍԵՔՍԻՔՈՅԻ ՄԷՋ ՄԻԱՑԵԱԼ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ

Շաբուևակուած էջ 7-էն

ցան Ազգային Թանգարանին: Խաչքարը պիտի մնայ Մեքսիքայի Մշակութային Ազգային Թանգարանին մէջ:

Առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ խաչքարի օծումէն ետք, խօսք առին Դեսպան՝ Գրիգոր Յովհաննիսեան, Լոս Անճելըսի Քաղաքային Խորհուրդի Անդամ՝ Փոլ Գրիգորեան եւ Թանգարանի Վարիչ՝ Գարլոս Վազգէյ Օլվերա: Ապա Սրբազան Հայրը փոխանցեց իր պատգամը, որուն մէջ ըսաւ.

«Հայ ժողովուրդի մշակութիւնը գլխաւորաբար ազդուած է մեր նախահայրերու Քրիստոնէական Հաւատքէն: Մեր հաւատքին ամէնէն կենսունակ արտայայտութիւնը աշխարհին եղած է մեր ճարտարապետական եզակի քանդակը Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցոյ եւ բժախնդիր քանդակագործութեան արուեստը իւրաքանչիւր խաչքարի: Խաչքարը մեր նուէրը եղած է աշխարհին եւ անսահման սիրով է, որ մենք կը ձօնենք այս սրբագործուած խաչքարը Մեքսիքոյի ժողովուրդին»:



Ձեր Ծանուցումները Վստահեցե՛ք
«Մասիս» Շաբաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ
Պր. Ռաֆֆի Քէօթօղլեան ընդ Օր. Թիմա Ռաժա Խօսեցեալք
Մեր ջերմ շնորհաւորութիւններն ու երջանիկ կեանքի բարեմաղթութիւնները նշանուած զոյգին, անոնց ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկին Վարդան եւ Օճիկ Քէօթօղլեանին:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի վարչիչ Մարմինը խոր ցաւով իմացաւ սփիւռքահայ անուանի բանաստեղծ, Նոր Սերունդ Մշակութային Միութեան հիմնադիր անդամներէն, երկարամեայ կրթական գործիչ, ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան նախկին անդամ, լիբանանահայ գրողներու համախմբումի քարտուղար, բազմաթիւ գիրքերու եւ հրատարակարական յօդուածներու հեղինակ՝ ՊէՊՕ ՍԻՄՈՆԵԱՆԻ մահը:

Այս տխուր առիթով շրջանիս բոլոր կառույցներու անունով մեր խորագրաց վշտակցութիւնները հանգուցեալի աչրիին Տիկին Ազատուհի Սիմոնեան-Պալայճեանին, իր զաւակներուն Տիգրանին, Ռագմիկին, ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան, Լիբանանի Շրջանի վարչիչ մարմինն, Հ.Կ.Բ.Մ.ի եւ Ն.Ս.Մ.Մ.ի վարչութեանց ու համայն պարագաներուն:

ՄԴՀԿ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

Նոր Սերունդ Մշակութային Միութեան Հիմնադիրներէն, Պէպօ Սիմոնեանի մահուան բօթը խորապէս ցնցեց մեզ: Մեր խորագրաց ցաւակցութիւնները հանգուցեալի տիկնոջ, զաւակներուն ՆՍՄՄ.-ի բոլոր մասնաճիւղերու վարչութիւններուն եւ համայն ընտանեկան պարագաներուն:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ՊէՊՕ ՍԻՄՈՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հարաւային Գալիֆորնիոյ Սահակեան-Լեւոն Մկրտիչեան գոլէճի Սանուց Միութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ Սահակեանի նախկին տնօրէնի՝ վաստակակաշատ կրթական մշակի աչրիին, զաւակներուն, Հ.Կ.Բ.Մ.ին, ընտանեկան պարագաներուն եւ համայն հարազատներուն:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

Գրող, մտաւորական, ազգային գործիչ, երկարամեայ տնօրէն եւ սիրելի ուսուցիչ՝ ՊէՊՕ ՍԻՄՈՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով, Տօթթ.եւ Տիկին Համբիկ եւ Նաիրա Սարաֆեաններ իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի տիկնոջ, զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն ու փոխան ծաղկեպսակի «Մասիս» շաբաթաթերթին կը նուիրեն \$100 տուար:

ՉԱՐԱՂԵՏ ՄԱՐԸ ՅԱՓՇՏԱԿԵՑ

Շարունակուած էջ 1-էն

խոնջ գործիչին, հրապարակագրին, բազմաշնորհ բանաստեղծին, արձակագրին, ներքու գրականագէտին եւ գրաքննադատին եւ աւելի քան տասը հաստափոր հրատարակութիւններու հեղինակ՝ Պէպօ Սիմոնեանի մահը:

Մահագնէրու այս երկար շարքը, որուն վրայ կը գումարուին նորեր՝ կու գայ ապացուցելու նշմարիտ մէկ իրողութիւն, թէ Պէպօ Սիմոնեանի մահով, ընտանեկան, բարեկամական, ընկերական, կուսակցական, գաղափարախօսական, միութեանական, մշակութային, մանկավարժական, գրական-գեղարուեստական եւ գրականագիտական քննադատարոններու մէջ գործնապէս կառուցողական ներկայութիւն հանդիսանալով, անդարմանելի կորուստ մը կ'արձանագրուի իր նախնական արական յափշտակուածութեամբ, որ հոգեւոր իմաստով կը թարգմանուի այն իմացութեամբ, թէ իր շնչատուր կեանքին անմնացորդ տեսողութեան ընթացքին ցանած հունտներու դալարացումով, ան, ընդմիջտ ներկայութիւն պիտի մնայ ներկայ եւ գալիք սերունդներու յիշողութեան մէջ: օ

Պէպօ Սիմոնեան, մշտական ներկայութիւն, իրրեւ գաղափարապաշտ շարքային մտաւորական՝ նուիրուեցաւ հայ գիրքին, գրականութեան տարածման եւ ստեղծագործական ծաղկուն աշխատանքին: Ան ջատագովը հանդիսացաւ իր

ժողովուրդին միասնութեան, հայրենիքին ներս ժողովրդավարական կարգավիճակի հաստատման, հայնորահաս սերունդներու հայեցի դաստիարակութեան եւ հայ ժողովուրդի դարաւոր պահանջատրական սրբագան առաքելութեան:

Ան հաւատաց ու հաստատ մնաց իր այն համոզումին վրայ, որ հայ ժողովուրդի գոյութեան պահպանումը, հզօրացումը ու նաեւ մեր ազգային պահանջատրական պայքարի յաջողութեամբ պսակումը, անվիճելիօրէն պայմանաւորուած են մեր ազգի բազմերանց շերտաւորումներու անտեղիտալի համագործակցութեամբ եւ Հայրենիք-Սփիւռք կապերու գորացումով:

Ան հոն էր, ուր կարիքը կար իր ներկայութեան եւ գորակցութեան: Այդ իմաստով՝ Պէպօ Սիմոնեան, մի՞նչեւ իր վերջին շունչը, մնաց իր ժողովուրդի կողքին, ապրեցաւ իր ժողովուրդի ցաւերով եւ մահանցաւ իր ժողովուրդին համար:

«Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու վարչական Անճնակագրը կը սզան իրենց շարքային ընկերոջ եւ հաւատաւոր աշխատակիցին դառն մահը, այն ջերմակնկալութեամբ, որ անոր գաղափարապաշտ նուիրումները հանդէպ իր նուիրական կուսակցութեան, հայ մշակութային պահպանման, ազգին ու հայրենիքին՝ օրինակ կը դառնայ իրենց:

Հողը թեթեւ յղմաբեկ ոսկորներուդ, եւ յիշատակը վառ՝ սիրելի՞ Պէպօ:

ՄԴՀԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Շարունակուած էջ 6-էն

Թիւով էր այդ ընկերներուն անուանացանկը: Լիբանանէն երկու հոգի, որոնցմէ մէկը ընկ. Պէպօն: Անշուշտ, ընկ. Պէպօնի առաջին պարգեւատրումը չէր այս: Ան, արժանիօրէն պարգեւատրուած է Հայաստանի նախագահէն, Հայաստանի մշակութի նախարարութենէն, Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն, Հնչակեան Կուսակցութենէն եւ Լիբանանի կրթական նախարարութենէն: Այս պարգեւատրումը սակայն, ունի բարոյական յատուկ նշանակութիւն մը բոլոր անոնց համար, որոնք երկար տարիներ հաւատարիմ մնացած են Քսաներու ուղիէն ընթանալու իրենց երդումին: Կեդրոնական վարչութիւնս երբ

ճշդեց պարգեւատրուող ընկերներուն լրացնելիք պայմանները, հոն նշուցաւ թէ անոնք պէտք է ողջ ըլլան (այսինքն ոչ յետմահու): Սակայն ընկ. Պէպօն անապարեց, մեզ դնելով առնուած որոշումը խախտելու ստիպողութեան տակ: Մենք կը ցանկանայինք, որ ընկ. Պէպօն մեզ այս իրավիճակին մէջ չդնէր. ան երկար ու շատ երկար ապրէր: Բայց եթէ այս է բնութեան կամքը, մենք առանց վարանելու կը խախտենք առնուած որոշումը: Ընկ. Պէպօնին համար կ'արժէ ընել այդ: Վարձքը կատար սիրելի ընկեր: Մենք պիտի շարունակենք այս ճամբան: Քու անուով Հնչակեան Կուսակցութեան ժամանակակից պատմութեան մէջ այնքան խորը դաջուած է, որ անհնար է այդ մոռցուի:

ԴԵՍՊԱՆ ԶԵՆՐԻ ՍՈՐԳԸՆԹԱՌ ՅՈՒՇԵՐԸ

Շարունակուած էջ 16-էն

Օսմանեան թուրք պետութիւնը, կոտորածներ կատարելուց առաջ, սովորութիւն էր դարձրել իրենց զբաղեցրած պաշտօններից հեռացնել վատահումները չվայելող պաշտօնատարները, նրանց փոխարինել հնազանդ սպասաւորներով: Վրդովեցուցիչ էր՝ կեանքին մի մասը վանայ մէջ անցկացրած, հոգին իր ցեղին յոռեգոյն աւանդութիւններով լեցուն, կեղծաւոր, նենգամիտ եւ վայրագ մի թուրք՝ ոչ թէ մի մարդ, Վանում պաշտօնի կոչելը: Նա ատում էր հայերին, իրենց ազգայնական խնդիրը լուծելու միտքը հաճոյ էր իրեն: Իթիբարատական դահլիճից հրահանգներ էր ստացել իր պաշտօնավարած նահանգի մէջ լուծելու հայերը բնաջնջելու հարցը: Սակայն այն իրագործելու դիւրին նախադրեալներ չկային: Զեւեթթը կովկասում մարտնչում էր Ռուսական բանակների դէմ: Պատերազմական գործողութիւնների ձախողումը ու Ռուսական բանակի վանին մօտեւանը նկատելով, առ ի խոհեմութիւն հրամայել վատ չվարուել տեղի հայերի հետ:

1915 թուականի գարնան սկզբին, Ռուսական բանակը ժամանակաւորապէս ետ էր քաշուել: Թուրքի համար բարեբախտութիւն էր այդ, հայերը զրկուած էին իրենց պաշտպաններից: Ռազմաճակատում նման իրադրութիւնը, թուրքի սպառնալիքների ենթակայ էին դառնում հայերը: Խախտելով ռազմագիտական ընդունուած կարգը, թուրքերը փոխանակ հետապնդելու նահանջող թշնամու, իրենց զօրագուհները ետ էին դարձել, արշաւել երկրի սեփական տարածքի տարբեր կողմեր: Թուրքերը իրենց զենքը ուղղել էին վանի շրջակայ շէների Հայ կիւնքու, մանուկներու, ծերունիների դէմ: Համաձայն իրենց վայրենի վարուելակերպի՝ առեւանգել էին կանանց, կողոպտել ու այրել Հայկական գիւղերը, օրեր շարունակ ջարդել տեղի բնակչութիւնը:

Ապրիլ ամսուայ 15-ին, 500 երիտասարդների կանչել էին ներկայանալու, մայրամուտից առաջ քաղաքից դուրս տարել ու անգթօրէն սպաննել: Իրենց կրօնն էր այդ արտօնում, վայրի բնազոլով Օղոնց ցեղի թուրք մարդկանց սրտերին իրենց աստուածը գութ չէր հոսել: Նոյն խժեղութիւնները կատարել էին վանայ ծովի հիւսիսի մարզում

գտնուող 80 գիւղերում, երբ օրերի ընթացքում ամենաանարգ ձեւով 24000 հայեր սպաննել:

Զեւեթթ, իր պաշտօնատեղի՝ վան, վերադառնալուց յետոյ պահանջել էր, որ հայերը 4000 զինուոր տրամադրէին իրեն: Հաշուի առնելով անցեալին պատահած դէպքերը, հայերը տրամադիր չէին եղել այդ պահանջը կատարելու: Զեւեթթ, Պոլիսից իրեն եկած հրահանգների համաձայն մտադրուել էր բնաջնջել քաղաքի ամբողջ Հայ բնակչութիւնը: 4000 քաջաուող մարդիկ պահանջելով, մտադրուել էր սպաննել նրանց, հայերին զրկելու համար ինքապաշտպանութիւնից: Հայերը, ժամանակ շահելու համար բանակցութիւններ էին վարել նրանց հետ՝ առաջարկել 500 զինուորներ տրամադրել, մնացածի համար փրկագին վճարել: Զեւեթթ այդ ատեն «ապստամբութեան» մասին խօսք անելով, իր որոշումը յայտնել «խեղդելու» այն: «Եթէ ապստամբները հրացանի մէկ հարուած արձակեն», յայտարարել էր ան, "պիտի սպաննեմ բոլոր քրիստոնեաները՝ այր, կին թէ մանուկ, մինչեւ ամենէն պզտիկները» իր վիրաւոր ծունկն էր ցոյց տուել: Թուրքերը Հայկական թաղին շուրջ խրամներ էին բացել, այնտեղ զինուորներ էին տեղակայել: Ի պատասխան այդ զրգուրթիւններին, հայերը սկսել էին պաշտպանուելու պատրաստութիւններ տեսնել:

Ապրիլի 20-ին, թուրք զինուորական ջոկատը, վան մեկնող Հայ կիւնք էր բռնել, սպաննել էին նրանց օգնութեան փութացող երկու հայերի: Թուրքերը, հրացանով ու հրետանիով կրակ էին բացել Հայոց արուարձանների վրայ, քաղաքի մեծ մասը բռնուել էր բոցերով: Կանոնաւոր պաշարում էր կազմակերպուել: Հայերի կուռուղների ուժի թուլացումը կազմում էր 1500 մարդ: Նրանք միայն 300 քառասուն զենքեր ունէին եւ անբաւական չափով ռազմանիւթի պաշար: Զեւեթթ բանակը բաղկացած էր, կատարելապէս զինուած եւ լաւ պարենաւորուած, 5000 հոգիէ: Մինչեւ Հ.Մորզընթաուի վանի հերոսամարտի մասին իր անկեղծ ու հիացմունքով գեղուն գնահատանքի խօսքը մէջ բերելու, յաջորդիւ պիտի շարունակեմ նկարագրել հերոսամարտի ընթացքը, նա այն մանրամասն չի յիշատակել իր յուշերում, խոստովանելով որ, իր խօսքով ասած, «չեմ յաւանդել իբր զինուորական պատմագիր մը ըլլալ»:

The Armenian Genocide

What the World Witnessed A Century Ago

A Presentation of **AGBU Asbeds**



On Exhibit
Front Page
Coverage in the
World Press



On Display
April 8-10 | 2015
11am-10pm
Free admission



April 8 | 7:30pm
Opening Night Reception
Welcoming remarks and speeches by various VIP's and dignitaries in attendance, exhibit tour and discussion.
Keynote Speaker
Dr. Hayk Demoyan
Director of the Armenian Genocide Museum-Institute
Yerevan, Armenia



April 9 | 7:30pm
Economics of the Armenian Genocide

Lecture: "Economics of the Armenian Genocide and its consequences."
Speaker
Dr. Ugur Ümit Üngör
Associate Professor of History
Utrecht University
Institute for War, Holocaust, and Genocide Studies, Amsterdam
The Netherlands
Moderator
Kurken Berksanlar
AGBU Asbeds

April 10 | 7:30pm
Forcefully Islamized Armenians

Panel Discussion: "Islamized Armenians, who are they, how many are there, and how should, Armenia, the Armenian community at large and the Armenian Apostolic Church accept them?"
Panelists
Abp. Hovnan Derderian
Primate of the Western Diocese
Raffi Bedrosyan
Writer, activist, Toronto, Canada
Moderator
Kurken Berksanlar
AGBU Asbeds

Armenian Genocide
Museum-Institute

Skirball Cultural Center

2701 North Sepulveda Blvd Los Angeles CA 90049

For information contact
AGBU Asbeds
626-794-7942 | asbeds@agbuca.org



1915-2015
Centennial of the
Armenian Genocide

